№ 97 ԵՐԵՔՇԱԲԹԻ 7 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 7 ՄԱՅԻՍԻ № 97

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ, 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՊԱՊԻՐՕՍՆԵՐ ԳԱԼԻԱ „ԿՕՄԷՏԱ“ ԸՆԿ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ:
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (Ա. ու.) 986. 0—38

ՄՇԱԿ

ՄԱՅԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ, հին ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Գովասանք դուրս գտնող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Ղարիսում՝ 8 Площадь Биржи.

1913 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, մայիսի 7-ին

Յօբելեանական ներկայացում

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

կը տայ հանդիսաւոր ներկայացումն

Ի պատիւ դերասան Դ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ 40-ամեայ բեմական գործունէութեան

I Ամօր ձեր աղայուրեանը թարգմ. Գ. Տէր-Դաւթեանի 2-րդ գործողութիւն

II ՊԷՊՕ հեղ. հանգ. Գ. Սունդուկեանի 3-րդ գործողութիւն

III Օսկան Պետրովիչը դժոխքումը

Այս անգամ դժոխքից դուրս կը գան նոր մեղք գործած անձնաւորութիւններ: Գարս 1 գործ. հեղ. Գ. Սունդուկեանի:

Խաղամիջոցին պ. ՀԱԶԱՐԻՆ իր խմբով կերգէն:

Մասնակցում են՝ տ. տ. ՄԱՑՈՒՐԵԱՆ, ՎԱՐԴՈՒՀԻ, Ցաստիկ, Վիկի-Մարօ, պ. պ. Մելրաղեան, Տէր-Գրիգորեան, Մամիկոնեան, Ստեփանեան, Տալեան, Փիրումեան, Տէր-Դաւթեան և ուրիշները:

ՏՈՒՐԻՍՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ

Միխայլովկի պր., 66.

Այս օրերս կը լինի թատրօնի եւ այգու բացումը:

359. 1—1

Գ. ԳՕՐՆԻԳ Գօրնիգի պր. 11, զինուորական-դպրոցական մասի մօտերքում մեծ:

Գ. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
основ. съ 1873 г.
СПЕЦ. ОКУЛИСТ. ОПТИКА.
ЕДИНСТВ. НА КАВКАЗѢ
ШЛИФОВАЛЬ ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛъ
БИНОКЛИ ДЛЯ ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ
ВСѢХЪ ЛУЧШИХЪ СИСТЕМЪ И ФАБРИКЪ.
Головинск. пр. 11 около военно-ист. музея.

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, թոքախտի և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԴԻի պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՈՐԱՅՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Հիւանդներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլոլակի, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանսկայայ): Հեռաթոս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—66

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Նամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդներն ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—11½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Գլեմինսկայայ փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—31

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլինոներով և պնեվմատորակով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
(առաւօտեան 12—1 ժ.
Ամեն օր (երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Բոլշչնովսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(Ա. Հ. Կ.) առ. 746. 100—89

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Բոլշչէվսկայա № 1.
առ. (Կ. Ա. Հ.) 4. 100—50

ԴԵՐԱՍԱՆ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Այսօր Թիֆլիսում ոսնվում է տաղանդաւոր հայ դերասան Գէորգ Տէր-Դաւթեանի դերասանական գործունէութեան քառասնամեայ յօբելեանը:

«Մշակի» խմբագրութիւնը ողջունում է տաղանդաւոր յօբելեարին, որը տուել է հայ բեմի բազմաթիւ տիպական դէմքեր, որը Դիքօյի տիպի մարմնացնողն է հայ բեմի վրա և կատակերգական ամպլուայի շատ դերերի շնորհալի կատարողը:

«Մշակի» թէ անցեալ և թէ ներկայ համարում մենք զետեղում ենք յիշողութիւններ և ուրիշ յօդուածներ նուիրված յօբելեարի գործունէութեան:

Ցանկանում ենք յօբելեարին առողջութիւն և կարողութիւն դեռ էլ շատ տարիներ գործելու հայ բեմական ասպարէզում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)
5 մայիսի

Կ. Պոլիս.—Հայոց ազգային ժողովի նիստում պատրիարք Արշարունին յայտնեց, որ վերջին վեց ամիսների ընթացքում նա 176 զեկուցագիր է ներկայացրել Բ. Դրանը Հայաստանի ցաւալի դրութեան մասին, սակայն առանց հետեւանքների: Կառավարական բարենորոգումների խոստումները հայերին վստահութիւն չեն ներշնչում:

Քիւրդ ասանդները մեծ վէճերին բողոք ներկայացրին հայոց պատրիարքի՝ քիւրդերի դէմ գործ դրած վիրաւորական յայտարարութիւնների դէմ և պահանջում են բաւարարութիւն:

Հայաստանում դրութիւնը օրէ-օր դառնում է աւելի ևս կրիտիկական: Շատ տեղերում հայերը ենթարկվում են բռնկոտի:

—

(Լրագիրներից)

Կ. Պոլսից հեռագրում են, որ կենտրոնական հայկական կոմիտէը վճռեց դիմել Լոնդոնի դեսպանաժողովին, ինդրելով աւտոնոմիա տալ թիւրքահայկական վիլայէթներին, ուր դերակշռող տարրը կազմում են հայ բնակիչները: Այդ վիլայէթների թւում մտնում են Վանի, Սըվազի, Դիարբէքիրի, Բիթլիսի, Խարբերդի և Երզրումի վիլայէթները: Աւտոնոմիան երաշխաւորվելու է մեծ պետութիւններից: Բայց որովհետև վերջին կէտում տարաձայնութիւն է նկատվում մեծ պետութիւնների միջև, ուստի կոմիտէը խնդրում է դեսպանաժողովին վերահաստատել իրաւունքը յանձնել իբրև համաեւրոպական մանդատ մեծ պետութիւններից մէկին ու մէկին:

—

Կ. Պոլսի անգլիական դեսպանը խորհուրդ տուեց Մահմուդ-Շէվքէթին վերջ դնել հակահայկական քաղաքականութեանը, հասկացնել տալով որ հակառակ դէպքում Անգլիան ստիպված կը լինի միջոցներ ձեռք առնել, որպէսզի յուզմունքները չը տարածվեն այն նահանգները, ուր Անգլիան ունի խոշոր առևտրական շահեր:

—

Կ. Պոլսից ստացված հեռագրի համաձայն՝ հայոց պատրիարք Արշարունու և «Դաշնակցութիւն» կուսակցութեան միջև կայացել է ժամանակաւոր համաձայնութիւն՝ փոխադարձաբար օգնելու մասին, երբ նրանք հանդէս են գալու Բ. Դրան և մեծ պետութիւնների առաջ:

—

Փոքր Ասիայի զանազան տեղերից շարունակվում են ստացվել Կ. Պոլսում յուզիչ տեղեկութիւններ հայ-քիւրդական յարաբերութիւնների և անկարգութիւնների մասին:

—

Կ. Պոլսի գերմանական դեսպանատան տեղեկութիւնների համաձայն, թիւրք - պարսկական սահմանագլխում կենտրօնանում են ռուսաց զօրքեր. «H. Bp.»-ի թղթակցի ասելով Մահմուդ-Շէվքէթ-փաշան կարգադրել է այդ տեղեկութիւնները:

—

«Berl. Tag.»-ը հայկական հարցի առիթով գրում է. «Մենք, գերմանացիքս, ոչ պակաս ուսներից շահագրգռված ենք հայկական վիլայէթներում բարենորոգումներ մտցնելու խնդրով, մանաւանդ որ Բաղդադի երկաթուղին անցնելու է Ուրֆայի և Դիարբէքիրի միջով: Մենք ֆրանսիացիների նման Թիւրքիայում ունենք ապաստարաններ, հիւանդանոցներ, դեռ չը խօսելով տնտեսական յարաբերութիւնների մասին: Հայերը հանդիսանում են թիւրքական ֆինանսական-քաղաքական դիպլոմատիայի նեցուկը, և մենք բոլոր ոյժերով պէտք է աշխատենք օգնել նրանց իրաւական դոյութիւնը ապահովելու հեռատեսուա գործին, և միայն այդ ճանապարհով Թիւրքիան կարող կը լինի ոտք դնել քաղաքակրթութեան ուղիի վրա»:

—

Բիթլիսի շրջանում, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ստացած տեղեկութիւնների համաձայն, ապստամբութիւններ է սկսել յայտնի աւազակապետ քիւրդական շեյխ Սէյիդ-Այլին: Նա հրդեհում ու կողոպտում է հայկական գիւղերը: «Դաշնակցութիւն», «Հնչակ» և «Կադէտ» կուսակցութիւններից կազմված միացեալ կոմիտէը դիմեց հեռագրով մեծ վեզիրին, յայտնելով որ կառավարութեան ամօթալի ու յանցաւոր վերաբերմունքը դէպի հայերը վերջ ի վերջոյ կորցնել է տալու հայկական վիլայէթները: «Թիւրք-բալկանեան պատերազմի ժամանակ հայերը լռեցին, որովհետև այն ժամանակ ներքին տարաձայնութիւնները կարող էին սպառնալ օսմանեան տէրութեան ամբողջութեանը, բայց այժմ այլևս մեղք է լռել»,—գրում է միացեալ կոմիտէը. Նկարագրելով Հայաստանում կատարվող սարսափները, կոմիտէը մատնանշում է, թէ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, այլապէս Անատոլիային սպառնում է Բումէլիայի վիճակը:

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Դուռը կարգադրեց բոլոր թիւրք լրագիրներին չը տալ հայկական յուշագիրը:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐԳԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Վան, 25 մարտի

Փետրվարի 21-ի թւակիր իմ նամակով ես յայտնեցի, որ Ողիմ գիւղի 25 ընակիչ և Խորտենց գիւղի 22 ընակիչ ենթարկվելով հալածանքների՝ ստիպվեցին փախչել, չը ձերբակալվելու համար: Այդ օրից հալածանքները աւելի սաստկացել են: Այսպէս՝ Խարակոնիից մի հայ կալանաւորվեց և բերվեց այստեղ այն պատրուակով, թէ նա ոյժով վնասուրում է գիւղացիներին: Կոչնագրեր, նոյն պատրուակով, ուղարկվել են Մանասի ուրիշ 7 հայերի, որոնցից մինը բանտարկվեց: Պերկարիվ և Կոճ գիւղերից 5 հայեր և մեր քաղաքից 15 հոգի՝ միաժամանակ հալածված են դատաստանական և ոստիկանական իշխանութիւնների կողմից:

Եթէ յիշեալ անձինք չը գան, դա ոչ թէ նրա համար է, որ իրանց յանցաւոր են զգում, բայց որովհետև դատարանը նրանց ոչ մի վստահութիւն չէ ներշնչում և հաւատ չունեն նրա անաչառութեան վրա ու հաւատացած են, որ ամիսներով, գուցէ և տարիներով, մնան բանտում:

Հարկաւոր է շեշտել, որ մինչ կալանաւորում են հայերին, մեղադրելով թէ գիւղացիներին ոյժով զինաւորում են, միւս կողմից ամենայն ազատութիւն են տալիս քիւրդերին և թիւրքերին, որոնք շրջում են ոտքից գլուխ սպառազինված: Դրա հակառակ, ոչ միայն չեն թոյլատրում հայերին կրել ամենափոքր զէնք, բայց խուզարկութիւններ են կատարում նրանց տներում՝ զէնք որոնելու պատրուակով: Բազմաթիւ անձինք այդ պատճառով բանտարկված են և հալածված:

Մի ուրիշ իրողութիւն: Մինչ Ողիմի 25 գիւղացիներ հալածված են օրինաւոր պաշտպանութեան իրաւունքը գործադրած լինելով՝ իրանց գիւղի վրա յարձակվող քիւրդերից մի քանիսին սպանելուն համար, մինչ Խորտենցցի 16 գիւղացիներ բանտարկված են և 22-ը հալածված հայի Եաղուբի և իր հետևորդների մահվան տուիթով և ամբողջ գիւղը մատնված է աւերման, հաշիւ 2—3 քիւրդեր բանտարկված են Մարտիրոսի և Ռաֆայէլի սպանութեան պատճառով:

Իրերի այս վիճակը անտանելի է և բացատրվում է միայն նրանով, որ մտադիր են մատնել հայերին, անզէն և անպաշտպան, իրանց դահիճների կատաղութեան:

Եթէ ի նկատի ունենանք կառավարութեան աչառութիւնը, ինչպէս և դատարանի գործունէները, շատ բնական պէտք է գտնել, որ հալածված հայերը ոչ մի վստահութիւն չունեն նրանց վրա: Անա ինչու նրանք չեն ներկայանում և ինչու փախստականների թիւը բազմանում է, ինչպէս լինում էր հին ըէժիմի օրով:

Հարկաւորութիւն կա՞յ ասել, որ այդ անկանոն դրութեան շարունակութիւնը վտանգի է ենթարկում երկրի անդորրութիւնը, որովհետև փախստականները կարող են հաւածողների հետ պատահելիս՝ դիմել զէնքի, ինչպէս պատահեց վերջին տարին, երբ բուլդարացի Սարգիսը սպանեց մի ժանդարմ:

Իրերը կը ծանրանան գարնան, երբ փախստականները կը դիմեն լեռները, որպէսզի ազատվեն և այդտեղ գոյութեան միջոցներ հայթայթեն:

Այս ամենը ես յայտնեցի ընդհանուր կառավարիչ Իզզէթ-բէյին, ինչպէս և ընդհանուր-դատախազին, բայց երկուսն էլ չանսացին ինձ, ասելով թէ իրանք չեն խառնվում դատարանական գործերին և քննիչը անկախ է մինիստրութիւնից:

ԼՈՆԴՈՆՈՒՄ ԿԱՑԱՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՕՆՖԵՐԱՆՍԻ ԲԵԶՕԼԻՒՑԻԱՆ

Լոնդոն, 7/20 ապրիլի

Երէկ, ապրիլի 6/19-ին, այստեղ կայացաւ հայկական հարցի համար մի կոնֆերանս, որին մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվէյցարիայի հայասէրները, յանձին այդ երկիրներում կազմված կոմիտէների ներկայացուցիչներ: Կոնֆերանսին մասնակցում էին նաև կաթողիկոսական պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուպար-փաշա և անդամ Յ. Մաստիչեան, Լոնդոնի և Մանչէստրի հայ կոմիտէների ներկայացուցիչները՝ պրոֆ. Կարապետ Թումայեան և այլք:

Կոնֆերանսը գումարվել էր անգլիական պարլամենտի շինութեան մէջ:

Նախագահն էր սըր Ա. Վիլեամս, որ բանալով նիստը ծանօթացրեց ժողովին կոնֆերանսի նպատակի հետ, որ է՝ քննութեան առնել հայոց հարցը և միջոցներ ձեռք առնել թշուառ թիւրքահայ ժողովրդի փրկութեան համար: Նա խօսք տուեց կաթողիկոսական պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուպար-փաշային, բացատրելու համար թէ ինչ է թիւրքահայ ժողովրդի պահանջները:

Նուպար-փաշան, բացատրելով որ թիւրքահայերը որևէ անջատողական միտումների չեն ձգտում, այլ կամենում են միայն կեանքի, գոյքի, պատուի և կուլտուրական ազատ զարգացման երաշխիք, յայտնեց, որ կաթողիկոսական պատգամաւորութիւնը արդէն մշակել է Թիւրքաց-Հայաստանում մացնելի բէֆօրմների ծրագիրը: Նա ծանօթացրեց ժողովին այդ ծրագրի էական կէտերի հետ, որոնք հիմնված են Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի և 1895 թ. մայիսեան ծրագրի վրա, որ ժողովը ընդունեց մեծ հաւանութեամբ:

Ապա հետաղհետէ խօսեցին դօքտոր Ֆալը (Շվէյցարիայից), դօքտոր Լէպսիուս (Գերմանիայից) և այլ ներկայացուցիչներ:

Ի վերջոյ կոնֆերանսը միաձայնութեամբ կայացրեց մի բեզօլիւցիա, բաղկացած 7 կէտերից:

Այդ բեզօլիւցիան, բէֆօրմների հիմք ընդունելով Բերլինի դաշնագիրը և 1895-ի յիշատակագիրը, ընդունված մեծ պետութիւնների կողմից և հաստատված ռուլթանից, գալիս է այն եզրակացութեան, որ 1) Եւրոպական պետութիւնները պարտաւոր են անմիջապէս ձեռք առնել հայկական հարցը, 2) Թիւրք-բալկանեան հաշտութեան դաշնագրի մի մասն ևս պէտք է կազմէ հայկական հարցի լուծումը, 3) Հայաբնակ նահանգներից պէտք է կազմվի հայկակա

շրջան, որի գլխաւոր կառավարիչը կամ կօմիսարը պէտք է լինի եւրօպացի, ընտրված սուլթանից, հաւանութեամբ մեծ պետութիւնների, 4) Կոմիսարը պէտք է ունենայ իրան աջակից մի մնայուն կօնտրոլի յանձնաժողով, բաղկացած եւրօպացիներից, հայերից և մուսուլմաններից, ինչպէս և նահանգային ժողով, 5) Բէֆօրմներ պէտք է մտցվեն վարչական, դատաստանական, եւմտական ճիւղերի մէջ, 6) Նահանգի եկամուտները, բացի ընդհանուր գանձարանին վերաբերեալ տուրքերից, պէտք է գործադրվեն նահանգի պէտքերի վրա, 7) Բէֆօրմների գործադրութիւնը պէտք է գանվի եւրօպական մեծ պետութիւնների կօնտրոլի ներքոյ։

Կոնֆերանսը որոշեց, որ ամեն մի երկրի ներկայացուցիչները առաջարկեն իրանց կառավարութիւններին և արտաքին գործերի մինիստրներին գործադրել տալ Նուպար-փաշայի առաջարկած ծրագիրը։ Մ.

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՑԱՍՏԱՆԸ

Բիթլիս, 21 մարտի

Կովկասեան զինուորա-պատմական թանգարանի արխիվներում մինչև այսօր ևս պահվում է մի անյայտ հեղինակի ձեռագիրը, որ պատում է կայսր Նիկոլայ I-ի 1837 թ. կատարած ճանապարհորդութեան մասին Կովկասում։ Նրա խօսքով, այն օրից, երբ կայսրը ոտք կոխեց նոր նուաճված հայկական շրջանը, նա սիրված էր անդադար ըել ժողովրդի գանգատները տեղական վարչութեան պաշտօնեաների ամեն տեսակ կեղեքումների մասին։ Ի Թիւս այլոց, երբ կայսրը անցնում էր Սարդար-Աբադ գիւղով, գիւղացիները, վախենալով որ թագաւորին սովորական խնդրագիր ներկայացնելը իր նպատակին չի հասնի, որոշում են հրաւիրել իրանց վրա նրա ուշադրութիւնը նրանով, որ թագաւորի՝ գիւղից անցնելու ժամանակ, ամբոխի մէջ կանգնած [illegible] բարձր պահում է մի թեփոտած հաւ։ Երբ Նիկոլայ I խստիւ հարցնում է, թէ ինչ է նշանակում այդ վարմունքը, գիւղի քեօխվան յայտնում է բարկացած թագաւորին. «Մենք, քո հպատակներդ, ցոյց ենք տալիս քեզ թեփոտած հաւ, որպէսզի դու, խիստ և արդարադատ, իմանաս, որ քո չինովնիկները նոյնպէս թեփոտում են մեզ, անարդարութեամբ կառավարելով մեզ։ Թեփոտած թռչունը կենդանի է, բայց նա ցաւ է քաշում և դժուար է ապրել»։

Եթէ այժմ թագաւորող սուլթան Մուհամմէդ-Իշադ Վ-ը այցելէր Թիւրքայ-Հայաստանի վիլայէթները, նա անձամբ կը համոզվէր, որ Բիթլիսի հայերը ներկայանում են ոչ միայն թեփոտած հաւեր, այլև աչքերը հանած, կոսցը կտրած և թարմ ծանր վէրքերի հետքեր ունեցող հաւեր։

Պէտք է անձամբ լինել այսպէս կոչված հայկական նահանգների խորքում, հասատատ համոզվելու համար, որ այդտեղ, չը նայած սահմանադրութեան, հայերը «չեն համարձակվում յոյս դնել ամենավերջին վերաբերմունքի վրա դէպ իրանց, որպիսին վայելում են շները իրանց լաւ տէրերի կողմից»։

Արդէն առաջին վայրկեանից, երբ Բիթլիս եկայ, ես զգացի, որ ընկել եմ մի երկիր, ուր թագաւորում է մինչև այժմ իր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԵՐԱՍԱՆ Գ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԸ

(Յիշողութիւններ, հանդիպումներ)

Մի առանձին համակրութեամբ և հաճութեամբ ձեռքս եմ առնում գրիչս խօսելու Գ. Տէր-Դաւթեանի մասին։

Տաղանդաւոր հայ դերասանը, որ ստեղծել է Գիքօյի նշանաւոր դերը Գ. Սունդուկեանի անմահ «Պէսօյի» մէջ, որ հանդէս է եկել կատակերգական մեծ ձիրքով բազմաթիւ պիէսներում և որ տարել է իր ուսերի վրա հայ բեմի ծանրագոյն բեռները իր միւս ընկերների հետ մէասին երկար տարիներ ամենամեծ համբերութեամբ, մշտապէս ծնել է յարգանքի զգացմունքներ մեր ամենի մէջ դէպի իր գեղարուեստական անձնաւորութիւնը։

Իրբև դերասանի ճանաչում եմ Տէր-Դաւթեանին երկար տարիներ, մօտ 25 տարի։ Ցաւախ, իրբև թատրոնական քննադատ, խօսել եմ նրա խաղի մասին և արձանագրել նրա շնորհալի, երբեմն եղակի տաղանդաւոր կատարումները և նրա անձնուէր ու բարեխիղճ վերաբերմունքը դէպի իր կոչումը և պարտականութիւնները։

Իսկ անձնական իմ ծանօթութիւնը եղել է միայն վերջին տարիներում։

Եւ ես կօգտվեմ յօբելեանական տօնից՝ հաղորդելու մի քանի տպաւորութիւններ և տեղեկութիւններ, որ ես ստացել եմ իմ հանդիպումներից յօբելեարի հետ, և որոնցով՝ ենթադրում եմ՝ մի յայտնի տատիճանի լրացած կը լինի նրա դէմքի և գործի բնորոշումը։

Տէր-Դաւթեանը, որ այնքան համարձակ և ազատ է բեմի վրա, շատ քաշվող և հանգիստ մարդ է կեանքի մէջ—ամաչկոտ, անհամարձակ, ստուերի մէջ իրան պահող։

Նա զարգացել է հայ բեմի վրա, ծառայել է այդ բեմին և համարել է հայ թատրօնական գործը նուիրական իր համար։

Նա սկզբից բեմ է դուրս եկել իր խակամրդոյ խաւար այժով Աբդիւլ-Համիդի զզուելի և անամօթ ըէժիմը։ Հիւպատոսարանը, ուր ես իմանացի շնորհիւ մեր հիւպատոս Շերկովի սիրալիր հրաւէրի, անմիջապէս ենթարկվեց «օբսէրվացիայի» թէ ոստիկանութեան և թէ ծպտեալ լրտեսների կողմից։ Եւ ամբողջ 5 օր ոչ մի հայ չը համարձակվեց այցելել ինձ։ Միայն, երբ տեղական վալի Ալի-փաշան – ոստիկանութեան նախկին մինիստր առաջին սահմանադրական կաբինէտում—յայտարարեց, թէ նա թոյլատրում է հայերին ինձ տեսնել և ինձ հետ խօսել, օսմ. կայսրութեան «ազատ» քաղաքացիները վստահացան այցելել ռուս ժուրնալիստին, այն ևս մուսուլման ակաունորների կամ պաշտօնեաների ուղեկցութեամբ։

Արդէն դրանից կարելի է վստահաբար ենթադրել, որ Բիթլիսի քրիստոնեայ ժողովուրդը ապրում է ծանր ու կոպիտ ճընշման ներքոյ թիւրքական վարչութեան և տեղական մուսուլմանների անսահման կամայականութեան պատճառով։ Եւ իրօք, այդպէս է։ Նոյնիսկ քաղաքում հայերի կեանքը, պատիւը և անձնական զոյքը գտնվում են ամբողջովին քիւրդ բէկերի, աղաների և մի փոքր խմբի ձեռքում։ Այդ բոլորովին անգրագէտ, ագէտ և շահախնդիր անձինք, չը բաւականանալով կառավարութեան իրանց տուած առիճաններով, պաշտօնեներով և կոչումներով (օրինակ՝ Իրբահիմ-էֆէնդին, հարկային տեսուչը, 100-ից այն կողմը հաշուել չէ կարողանում. Իսմէիլ-փաշան չէ կարողանում սորոգրել իր անունը և այլն), իրանք ևս սեփականացրել են, տեղական իշխանութիւնների լռելեայն համաձայնութեամբ, բազմաթիւ հայկական զոյքեր՝ հողեր, խանութներ և ջրաղացներ։ Նրանցից ամեն մէկը հանդիսանում է որևէ մի քիւրդ աշիրաթի ներկայացուցիչ և, իրբև այդպիսին, վայելում է իր աւաղակային բոլոր յարձակումների մէջ աշիրաթի պաշտպանութիւնը։ Այդ կողմից առանձին [illegible] բարձր պահում է մի թեփոտած հաւ։ Երբ Նիկոլայ I խստիւ հարցնում է, թէ ինչ է նշանակում այդ վարմունքը, գիւղի քեօխվան յայտնում է բարկացած թագաւորին. «Մենք, քո հպատակներդ, ցոյց ենք տալիս քեզ թեփոտած հաւ, որպէսզի դու, խիստ և արդարադատ, իմանաս, որ քո չինովնիկները նոյնպէս թեփոտում են մեզ, անարդարութեամբ կառավարելով մեզ։ Թեփոտած թռչունը կենդանի է, բայց նա ցաւ է քաշում և դժուար է ապրել»։

Եթէ այժմ թագաւորող սուլթան Մուհամմէդ-Իշադ Վ-ը այցելէր Թիւրքայ-Հայաստանի վիլայէթները, նա անձամբ կը համոզվէր, որ Բիթլիսի հայերը ներկայանում են ոչ միայն թեփոտած հաւեր, այլև աչքերը հանած, կոսցը կտրած և թարմ ծանր վէրքերի հետքեր ունեցող հաւեր։

Պէտք է անձամբ լինել այսպէս կոչված հայկական նահանգների խորքում, հասատատ համոզվելու համար, որ այդտեղ, չը նայած սահմանադրութեան, հայերը «չեն համարձակվում յոյս դնել ամենավերջին վերաբերմունքի վրա դէպ իրանց, որպիսին վայելում են շները իրանց լաւ տէրերի կողմից»։

Արդէն առաջին վայրկեանից, երբ Բիթլիս եկայ, ես զգացի, որ ընկել եմ մի երկիր, ուր թագաւորում է մինչև այժմ իր

[illegible]

կան անունով և այդպէս էլ շարունակել է մինչև վերջ։

Ես հետաքրքրվեցի նրա տոհմագրութեամբ։

— Իմ հայրը Թիֆլիսեցի էր, քահանայ,—բացատրեց նա,—իմ մայրը շամշադինեցի՝ Թօուզ գիւղից։

— Իսկ ձեր պա՞պը,—հարցրի ես։

— Նա, ինչպէս երևում է, եղել է Արարատեան դաշտից, որքան լսել եմ՝ Եղվարդ գիւղից։

— Արդեօք չէք հետաքրքրվել, թէ ինչ հանգամանքով է ձեր ընտանիքը գաղթել Թիֆլիս։

— Ոչ,—պատասխանեց Տէր-Դաւթեանը,—միայն այսքանը գիտեմ, որ իմ պապի եղբայրը եղել է վարդապետ՝ Գիւլնազարեան ազգանունով, նա ունեցել է կրթութիւն և վայելում է եղել յայտնի անուն էջմիածնում։ Լսել եմ և այն, որ Հասան խանի ժամանակներում նա ուղարկված է եղել Լօնդոն՝ ինձ անյայտ յանձնարարութիւններով։ Գիտեմ և այն, որ երբ Գէորգ IV կաթողիկոսը եկել էր Թիֆլիս, իմ քեռի Ղարախանեանը ներկայացնելով ինձ կաթողիկոսին՝ խնդրել էր ինձ քահանայ ձեռնադրել։ Մանկունին, վերաբերվելով դէպի ինձ հմակրութեամբ, խոստացաւ ձրիաբար, կաթողիկոսի հաշուով՝ ուղարկել ինձ Խալիսական դպրոց՝ ուսանելու, բայց մայրս չը համաձայնեց. Մանկունին շատ յորդորեց և ասաց, թէ ուրիշները յատուկ խնդրքներով են դիմում մի այդպիսի արտօնեալ վիճակ ունենալու, բայց երբ տեսաւ, որ մայրս հաստատ է մնում իր որոշման, խորհուրդ տըւեց, որ ես գնամ եկեղեցի պաշտօնավարութեան, իսկ յետոյ ճանապարհվեմ Էջմիածին ձեռնադրվելու։ Եւ ես գնացի Հալաբարի ս. Մինաս եկեղեցին, որտեղ տիրացու եղայ շարունակ երեք տարի։ Այդ եկեղեցումն էր քահանայ եղել և իմ հայրը։ Երեք տարուց յետոյ ես թողի եկեղեցին և մտայ գործակատար աղանեցի վաճառական Լիսիսեանի խանութը։ Ահա այդ ժամանակ դէպքի բերմունքով ես ծանօթացայ հայ բեմի հետ։

հայասատական հողերի գրեթէ 3/4 մասը անցել է քիւրդերին, հիւպատոս Շերկովի ասելով, թիւրքայ իշխանութիւնները աչք են փակում այն բանի վրա, որ քիւրդերը թափառում են հայ գիւղերը, յայտնապէս հաւաքելով իրանց օգտին շնչագրամ, մի տուրք, որ յայտնի է այստեղ «քեաֆիրվերգիսի» (անհաւատների տուրք) հեգնական անուամբ։ Այդ երկու շրջաններում քիւրդերի՝ հայերի դէմ կատարած ոճիրների թիւը շատ մեծ է։ Խիզանի գաւառում, օրինակ, 1912 թ. սպանվել են 8 հայ, և ոչ մի դէպքում ոճրագործը չէ բռնվել. միևնոյն ժամանակ, եթէ իշխանութիւնները որևէ հիմք ունեն մեղադրել հայերին մի կատարված յանցանքի մէջ, նրանք արտակարգ եռանդ են ցոյց տալիս, ինչպէս, օրինակ, նոյն 1912 թ. իշխանութիւնները ձերբակալեցին 33 հայ՝ Մուշախշէն գիւղի բնակիչներ՝ միայն նրա համար, որ Կոտիկ գիւղի մօտ, որ շինված է յիշեալ գիւղի էմ յանդիման, գտնվեց մի սպանված քիւրդի դիակ։ Ես հաղորդում եմ այս տեղեկութիւնը Բիթլիսի մեր հիւպատոսի խօսքերից, որ սատիկ զգոյշ և շրջահայեաց մարդու համաբաւ ունի։

Ես հնարաւորութիւն ունեցայ ծանօթանալ մի քաղաքական զեկուցագրի հետ գործերի դրութեան մասին Բիթլիսում 1912 թ-ին։ Բերում եմ այդտեղից մի քանի քաղուածներ։

«Ամբական կոտորածներ այժմ այստեղ չէ կան, բայց առանձին սպանութիւններն, աւաղակութիւնների և զինաւորեալ կողոպտումների դէպքեր շատ են։ Վալին բացատրում է այդ ամենը մոլեռանդութեան բընկումով, իբրև հետևանք բալկանեան պատերազմի. ես հաստատում եմ, որ այդ տուրթիւն է և որ թիւրք պաշտօնեաները ոչ մի իրաւունք և հիմք չունեն թօթափել իրանցից պատասխանատուութիւնը։ Սա հասարակ վալի Ալի-փաշայի ձեռք առած միջոցները նրա անձնական գաղտնիքն են կազմում։ Հայերին ծեծում են գրեթէ ամեն օր (գրված է 1912 թ. նոյեմբերի 17-ին), իսկ Ալի-փաշան քծնում է քիւրդերի առաջ և նոյնիսկ բաժանում է յայտնի քիւրդ աւազակներին զանազան վարչական պաշտօններ։ Օրինակ՝ քիւրդ Զամախ-խանին նշանակել է Զեխինէի միւդիր։

«Տեղական հայ վարդապետ Սուրէն Կալամանը այնքան անարգվված է Ալի-փաշայի կողմից, որ անմոռնչ կազմում է վերջինս պահանջմամբ հանդիսաւոր մաղթանքներ յաղթութիւն պարգևելու թիւրքական վարչութեան. և այդ այն ժամանակ, երբ գիւղերում հայ այրիները և որբերը արտասուք են թափում քիւրդերի ձեռքով սպանված իրանց ամուսինների և հայրերի համար։ Համարում եմ, որ թիւրքայ կառավարութեան բոլոր յայտարարութիւնները կորցրել են որևէ գին և նշանակութիւն, որպէսզի կարելի լինէր դեռ լրջօրէն խօսել։ Փրկել այս երկիրը վերջնական ոչնչացումից կարող է միայն Ռուսաստանը (ես բառ առ բառ առաջ եմ բերում), և տեղական հայերը, գիտակցելով այդ, բոլոր իրանց հայեացքը դարձրել են Ռուսաստանի վրա, որից միայն և սպասում են ու հայցում պաշտպանութիւն և փրկութիւն»։

(«Б. Вѣд.») Տ. Օլգինին

Տէր-Դաւթեանը պատմեց, թէ ինչպէս նրբականջին հանում էին լուրեր հայկական ներկայացումների մասին, որոնց վերաբերմամբ պատմում էին Լիսիսեանի խանութի աւագ գործակատար Սահակ Ադիբէգ Մելիքեանը, իր ընկերակից Մակար Զմշկեանը և ուրիշները։

— Մի անգամ «Արշակ Բ.» ողբերգութեան մէջ,—շարունակեց Տէր-Դաւթեանը,—հարկաւոր էին երիտասարդներ խմբական երգեցողութեան համար։ Մակար Զմշկեանը եկաւ և հաղորդեց, որ ես գնամ մասնակցելու երգող խմբին։ Ես գնացի և մուտք գործեցի կուլիսների այն աշխարհը, որտեղ պէտք է յետոյ գործէի։ Շուտով Լիսիսեանի խանութն էլ փակվեց, և ես բոլորովին ազատ մարդ մնալով մօտեցայ բեմական գործին։ Գէորգ Զմշկեանը սկսեց հովանաւորել ինձ և մինչև անգամ ինձ վերցրեց իրբև օգնական իր երկրաչափական գործի մէջ։ Մի հանգամանք գրաւեց հասարակութեան ուշադրութիւնը ինձ վրա։ Ներկայ լինելով կրկնութիւններին, մի անգամ Գուրդէնբէգեանի «Հազար թումանոց կաբա» պիէսի կրկնութեան ես նկատեցի, որ բակլայ ծախող Սարուխանի դեր կատարող Սարգիս Ղազարեան գիտակցութեամբ է կատարում դերը և ուզում է հրաժարվել, իսկ ես հանանում էի այդ դերը, ուստի խնդրեցի դերասանուհի Սաթենիկին (Զմշկեանի տատդայ ամուսնուն), որ այդ դերը ինձ տան։ Երկրորդ օրը այդպէս էլ արին, դերը տըւին ինձ, փորձեցին և շատ գոհ մնացին։ Ներկայացումը հաւանութիւն գտաւ, և նոյն իսկ մամուլի մէջ երևացին համակրական տողեր։ Դա իմ առաջին աջողութիւնն էր բեմի վրա։

— Ովքե՞ր հին դերասաններից ունեցել են ձեզ վրա ազդեցութիւն։

— Հանգուցեալ Միրզաեանը, Գ. Զմշկեան և Ամերիկեանը։

— Զեզանից առաջ ո՞վ էր կատարում Գիքօյի դերը։

— Միրզաեանը։

— Արդեօք ձեր ներկայացրած Գիքօն նմա՞ն է Միրզաեանի Գիքօյին։

— Ես անշուշտ Միրզաեանի ազդեցութեան տակ էի կատարում առաջին անգամները, բայց յետոյ իմ Գիքօն կամաց-կամաց դարձաւ բոլորովին ինքնուրոյն դեր, որը ամբողջանում էր ժամանակի ընթացքում և դարձաւ այն, ինչ որ տեսնում էք բեմի վրա։ Գիքօյի դերից առաջ իմ կատարած դերերից շատ հաւանում էին Գուստաւ Քարանթարեանի հեղինակած «Քաղքի աղաթ» պիէսի մէջ դուրս բերած վաճառականի տիպը։

Տէր-Դաւթեանը պատմեց, որ իր սիրած դերերը նա շատ շատ էր իրագործում և երեք անգամ կարդալուց գիտէր նրան բաւարար կերպով, իսկ չը սիրած դերերը դժուարանում էր սովորել։

Տէր-Դաւթեանը բացի Գիքօյի նշանաւոր դերից յայտնի է իրբև լաւ կատարող Սարգիս ծառայի և Իսայու դերերը «Խաթաբալա» պիէսում, Գրիգոր ծառայի՝ «Նինօյի նշնվիլը» պիէսում, Ճարտարօվի՝ «Գիշերվայ սարը խէր է» զուեշտում, Սարգիս վաճառականի՝ «Լէլի մէկ զոռ» պիէսում, Ներկարար Պիկօյի՝ «Պարիզի աղքատներ» պիէսում, Հանսի՝ «Կախարդված պրինց» պիէսում և այլն։ Նա շատ աջողութեամբ կատարել է մէջտ ծառաների դերեր և յանախ ինքն է խնդրել, որ այդպիսի դերեր տան իրան և նրանց մէջ ունեցել է աջողութիւն։

Տէր-Դաւթեանը երկար տարիներ գործել է բեմական ասպարէզում իրբև բացառապէս դերասան, առանց կողմնակի աշխատանքների, թէ Թիֆլիսում և թէ ուրիշ քաղաքներում։ Նա չէ ստացել մեծ ռոճիկներ և բաւական է եղել, երբ աջողվում է եղել առանց պարտքի մնալ։

Երկու տարի՝ 1885 և 1886 թուականներին՝ նա եղել է հայ դերասանական խմբի ղեկավար, ընտրված լինելով այդ պաշտօնի համար խմբի կողմից։ Այդ այն ժամանակներումն էր, երբ թատրօնական առանձին կօմիտէտ կար Բագուում և կօմիտէտի անդամների թուումն էր նաև Հաչի Զէյնալ Աբդին Թաղիեվը։

ՀԱՐՍՏԱՀԱՐԱԿԱՆ ՑԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, ապրիլ 21-ին, կէսօրէն յետոյ ժամը 2-ին բացառիկ ազգ. ժողով գումարուեցաւ Դալաթիա։ Նիստը խիստ դանդակ էր, նոյն իսկ ազգային և օտար թերթերու ներկայացուցիչները չընդունուեցան, հակառակ իրենց բերանացի և գրաւոր դիմումներուն։

Ազգ. ժողովի երեկուան նիստը ոչ միայն հայկական շրջանակներու, այլ նաև օտարներու մէջ ընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերած էր, այնպէս որ օտար թերթերու բազմաթիւ ներկայացուցիչներ փութացած էին, որոնց մէջ յիշենք «Դէյլի Տէլէգրաֆի», «Нов.Вр.»-ի, ռուսական «Рѣчь»-ի և այլոց Պոլսոյ թղթակիցները և հեռագրական գործակալութեանց ներկայացուցիչները։

Ազգ. վարչութիւնը նախ խորհրդարանին մէջ նիստ կազմելով՝ խմբագրեց իր հրաժարականը, որ պիտի մատուցուէր ազգ. ժողովին, ինչպէս նաև մայր դիւանի հետ համախորհուրդ զանազան կարգադրութիւններ ըրաւ օրակարգի խնդրոց մասին։

Երբ վարչութիւնը աւարտեց իր խորհրդակցութիւնները, ազգ. ժողովը բացուեցաւ ի ներկայութեան 68 երեսփոխանների։

Պոլսոյ մէջ գտնուող երեսփոխանները գրեթէ ամբողջութեամբ փութացած էին այս նիստին։ Առանձապէս կարդաց վարչութեան հրաժարականը, որ խոր լռութեան մէջ ունկնդրուեցաւ։

Բազմաթիւ երեսփոխաններ խօսք առնելով ծանրացան վայրկեանի լրջութեան և ձեռք առնուելիք ազգու միջոցի մը անհրաժեշտութեան վրայ։ Իւրաքանչիւր խմբակցութենէ մէկ մէկ անձ միայն խօսեցաւ։ Ցեղ վիճաբանութեան ժողովը գրեթէ միաձայն հաւանութեամբ մերժեց վարչութեան հրաժարականը՝ ցոյց տալու համար, որ ազգը մենակ և համակարծիք է եղած դիմումներուն։ Միևնոյն տեսն ընդարձակեցաւ հինգ հոգիէ բաղկացեալ հարստահարական նոր յանձնաժողով մը, աջակցելու համար վարչութեան։

Բուէարկութեան մասնակցեցան 45 երեսփոխաններ և 30–37-ական քուէով ընտրուեցան հետևեալները, որոնք կը պատկանին զանազան խմբակցութիւններու.

1) Գրիգոր Զօհրապ (աղատ.), 2) Վահան Թէքէեան (ռամկ.), 3) Յարութիւն Շահրիկեան (դաշնակց.), 4) Դաւիթ Տէր-Մովսէսեան (կէդրոն), 5) Պետրոս Գալֆայեան (հնչակեան)։

Ժողովը ցրուեցաւ ժամը 7 և կէսին։

Դիւանը մամուլին հաղորդեց հետևեալ [illegible]

«Այսօր, ազգ. երեսփոխական ժողովի նիստին, ազգ. վարչութիւնը իր հրաժարականը ներկայացուց, յայտնելով որ իր բազմաթիւ դիմումներուն ապարդիւն մնալուն վրայ՝ իր միջոցները սպառած կը նկատէ։ Այս հրաժարականին և առ հասարակ հայկական նահանգներու վիճակի մասին խօսք առին բազմաթիւ երեսփոխաններ և ամենքը միաձայն զգուեցան կացութեան ծանրակշիռ հանգամանքի մասին։

«Միւս կողմէ, կայսերական կառավարութեան մօտ հարկ եղած դիմումները շարունակելու համար մերժեց վարչութեան հրաժարականը և վստահութիւն յայտնեց անոր։ Միահամայն հինգ հոգիէ բաղկացած յանձնաժողով մը կազմեց, պաշտօն տալով անոր հարստահարութեանց խնդիրը իր բոլոր հանգամանքներովը ուսումնասիրել, պէտք եղած թելադրութիւնը ընել և աջակցութիւնը տալ ազգ. վարչութեան՝ պահանջել հարկին ազգ. ժողովին դիմելով։ Կայսերական կառավարութեան մօտ կատարուելիք նոր դիմումներուն արդիւնքը լսելու համար ազգ. ժողովը բացառիկ նիստ մը պիտի կազմէ»։ («Մանզ. Էֆք.»)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

ՌՈՒՍ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻ ԹԵՐԹԻ ԿԱՐԾԻՔԸ

Հայկական հարցը սկսում է այժմէութիւն ստանալ ռուսական ոչ միայն առաջադիմական մամուլի մէջ։ Թիֆլիսի «Голосъ Кавказа» թերթը, արտատպելով «Р. Молва» Պետերբուրգի թերթի «Ռուսաստանը և հայոց հարցը» վերնագրով յօդուածը, ինքն իր կողմից հետևեալ առաջնորդող յօդուածն է զետեղել կիրակի օրվայ համարում։

Բալկանեան պատերազմը ինչ տեսակ և ազդէ Թիւրքիայի ապագայ դրութեան վրա իբրև փոքր-ասիական պետութեան, բայց Բալկաններում առաջ եկած փոփոխութեան բոլոր ամենաշատ անկասկած հետևանքները պէտք է կրէ վերջ ի վերջոյ Ռուսաստանը։

Եթէ Թիւրքիան կարողանայ վերականգնել իր զինուորական-քաղաքական նշանակութիւնը, նա հանդէս կը գայ գերմանական դաշնակցի դերում մեր կովկասեան սահմանի վրա և առաջ կը բերի նոր առաջին ծախսերի անհրաժեշտութիւնը մեր կողմից Անդրկովկասի զինուորական պաշտպանութեան և պաշտպական երկիրները Թիւրքական յարձակութիւնից պահելու համար։

Իսկ եթէ Թիւրքիան անընդունակ հանդիսանայ վերածնվել իր սեփական այժերով, նա կարող է արագօրէն դառնալ փոքր-ասիական տիրապետութիւն Գերմանիայի, որ կը ստանայ ուրեմն հնարաւորութիւն անմիջական կերպով ազդել գործերի դրութեան վրա Անդրկովկասում։

Այդ կողմից չափազանց մեծ նշանակութիւն է ստանում գերմանական կառավարութեան ակտիվ միջամտութիւնը փոքր-ասիական հայերի վիճակին մէջ, ի դէմս որոնց Գերմանիան, եթէ կարողանայ—ոչ յօրինակ Անգլիայի և Ռուսաստանի—առաջացնել նրանց դրութեան իրական բարւոքումն, ձեռք կը բերի հաւատարիմ բարեկամներ և անձնուէր ախոյեաններ գերմանականութեան գաղափարի։

Հայկական հարցին ի նպաստ Գերմանիայի միանձնական հանդէս գալու հնարաւորութեան համար Ռուսաստանը չէ կարող բնաւ անտարբեր մնալ։ Փոքր-Ասիայից դուրս եկած Անդրկովկասի մի և կէս միլիոն հայ ժողովուրդը չէ կարող չը հետաքրքրվել Թիւրքահայերի դրութեամբ, որոնց հետ սերտ կապ է պահպանում։ Եթէ այդ հայերը ստանան վաղուց սպասված ըէֆօրմները (դուցէ և երկրային ինքնավարութիւն) Գերմանիայի ձեռքից, այդպիսի հանգամանքը կազդէ ռուսահայերի տրամադրութեան վրա Ռուսաստանի համար հաւիւ ցանկալի մտքով։ Ռուսահպատակ հայերի մէջ Գերմանիան հետաքրքրութեամբ կարող է ձեռք բերել բարեացակամ տարը, որը նա, անկասկած, կը շահագործէ ինչպէս հարկն է՝ Ռուսաստանի հետ ունեցած կռիւի մէջ։

Զարքաշ, ծանր, զրկանքներով լի շրջիկ դերասանութիւն անելուց յետոյ Տէր-Դաւթեանը վճռեց դիմել կոմիսական աշխատանքի աղբիւրների և 1890 թուին գտաւ պաշտօն Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան մէջ, որտեղ նա պաշտօնավարում է 23 տարի։ Եւ անշուշտ այդ ընկերութեան ընդհանուր ժողովի վրա բարոյական պարտք կայ Տէր-Դաւթեանի յօբելեանի առիթով նշանակել փոքր ի շատէ վայելուչ մի գումար, յօբելեարին յանձնելու համար և ապառելու նրան դեռ ևս չը հատուցված միծատոկոս պարտքերից։

Տէր-Դաւթեանը բացառապէս գործել է հայ բեմի վրա։ Մի անգամ միայն նա մասնակցել է վրացական ներկայացման Փոթի քաղաքում «Օսկան Պետրովիչը դժոխքում» պիէսում, որովհետև գնդապետ Մելիք-Հայկազեանը ցանկացել էր հայերէն ներկայացում կազմակերպել, բայց աչքի առաջ ունենալով որ հայերը սակաւաթիւ են Փոթիում և յանախորդների մի մասը լինելու էին վրացիներ, հոգատար էր եղել, որ ներկայացումը վրացիների համար ևս դիւրըմբռնելի լինի։

Օտար բեմը առանձին ազդեցութիւն չէ արել Տէր-Դաւթեանի տաղանդի զարգացման վրա. բայց հետաքրքրել է նրան յաճախ ծանօթանալու նոր բեմադրուարի հետ. Տէր-Դաւթեանը նշանակել է իր յուշատետրում, թէ ո՛ր պիէսը յարմար է թարգմանութեան և մանաւորապէս իր դերակատարութեան համար, նշանակել է զգեստը, գրիմը, որպէսզի հարկաւոր եղած ժամանակը պատրաստ լինի իր դերի համար։

— Իսկ մամուլը և գրականութիւնը ուներե՞լ են ձեզ վրա ազդեցութիւններ,—հետաքրքրվեցի ես։

— Մի որոշ աստիճան ունեցել են,—պարզաբանեց նա,—մի ժամանակ ես կարդում էի «Артистъ» անունով թատրօնական հանդէսը. ես ուշի ուշով կարդում էի մեր պարբերական թերթերում հրատարակված քննադատութիւնները. «Մշակի» մէջ երևում էին թէ Վանս Տէր-Գրիգորեանի և թէ ուրիշնե-

Ճիշդ է, հայերը միշտ յայտարարել են իրանց լոյալութիւնը Ռուսաստանին. բայց միայն 10 տարի սրանից առաջ նրանք տուին մեզ Դաշնակցութիւնը, իսկ ընդհանրովին նորերս ակտիվ կերպով դուրս եկան ռուսաց զօրքերի դէմ Պարսկաստանում։ Հայերի մէջ նկատվող ձգտումը դէպի քաղաքական ինքնուրոյնութիւնը կարող է ստեղծել մեզ համար Անդրկովկասում, Թիւրքիայի մէջ տեղի ունեցող դէպքերի հետ միասին, շատ ծանր բարդութիւններ։ Պէտք է պատրաստ լինել դրանց դէմ և ըստ հնարաւորութեան՝ խափանել, վերցնելով մեր ձեռքը հայկական հարցի լուծումը Թիւրքական վիլայէթներում։

Զուր տեղն է «Голосъ Кавказа» թերթը հայերի երեսով տալիս Դաշնակցութիւնը և Պարսկաստանի դէպքը։ Նախ, Դաշնակցութիւնը երբ ստեղծվեց, նա բնաւ նպատակ չունէր Ռուսաստանի դէմ գնալ, իսկ երբ նա փոխեց իր ծրագիրը և այդ ուղղութեամբ քայլեր արեց, հայ ժողովուրդը երես դարձրեց նրանից և լքեց նրան. երկրորդ, Պարսկաստանի մէջ ռուս զօրքերի դէմ գործողները եղել են ոչ թէ հայերը, հայ ժողովուրդը, այլ դաշնակցականների մի սանձարձակ խումբ. վերջապէս ինքը Դաշնակցութիւնը, ինչպէս ցոյց տուեց Օլգենինը իր թղթակցութիւնների մէջ, այժմ բոլորովին փշրվել է իր արածների մասին և աշխատում է քաւել իր սխալները։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)

5 և 6 մայիսի

Սկոպլէ.—Ցոյն և սերբ օֆիցէրներից կազմված խառն յանձնաժողովը որոշեց չէզոք գիծ ժամանակաւոր սահմանին մօտիկ, որ սկսվում է Դէվրէլից, անցնում է Դուդիցա և Նիդզէ լեռներով և հասնում է մինչև Դրինա։ Նոյնպիսի սերբ-բոլգարական յանձնաժողովը որոշեց սերբերից և բոլգարներից գրաւված տեղերի ժամանակաւոր սահմանը, որ սկսվում է հիւսիսային Թիւրք-բոլգարական սահմանագլխում Կրիվա-Պալանկա քաղաքից դէպի հարաւ-արևելք։ Իշտիբ, Բաչովիշտա, Ստրումիցա և Դոյրան քաղաքներում, որոնք գրաւված են բոլգարներից և սերբերից միասին, գտնվում են նոյնպէս սերբ զօրագնդեր, իսկ վարչական իշխանութիւնը պատկանում է բոլգարներին։

—

Ցէտինիէ.—Արտաքին գործերի մինիստր Պլամենացը, խօսելով չերնոգորական ներկայ կաբինէտի արտաքին քաղաքականութեան մասին, յայտնեց Պ. Հ. Գ. թղթակցին. «Դէպի Ռուսաստանը ստեղծած մեր յարաբերութիւնները կը մնան տրադիցիաների համաձայն, ինչպէս և մինչև այժմ, ամենաբարեկամական ու եղբայրական։ Դէպի Սերբիան մեր յարաբերութիւնները եղբայրական են, Աւստրիայի վերաբերմամբ իբրև հարևանի՝ ամենակորեկտ»։

—

Բելգրադ.—Պաշտօնական «Սամօուպրավան» «Պոլիտիկայի» կողմից կառավարութեանը ուղղված կշտամբանքների առիթով ասում է, որ լրագրի դարձուածքները կարող են անպատասխանատու ազդել սերբ-բոլգարական բանակցութիւնների վրա. Սերբիան եռանդուն քայլերի չէ ձեռնարկել հանդէպ Բոլգարիայի, մտադիր չէ յարձակվել նրա վրա, կամենում է բարեկամաբար հարթել բոլոր հարցերը բոլգարական կառավարութեան հետ, ոչ մի բարենորոգում չէ պահանջում Բոլգարիայից։

Սալոնիկ.—Բոլգարիան շտապով աւելացնում է իր զինուորական ոյժերը Մակեդոնիայում։ Այժմ այստեղ կենտրոնացված է 65,000 մարդ։ Զօրքերը բռնել են ճանապարհները։ Կավալան շատ ամրացված է ցամաքից ու ծովից։ Նաւահանգիստը փակ է նաւերի համար, ըստ երևոյթին ծովափում ականներ դնելու պատճառով։ Հնարաւոր է, որ յոյները հեռանան Սերէսից, Կաստրից և այլ քաղաքներից։ Կենտրոնական մթերքներ-մինիստրները ստիպված աւելացել են յարմար հաղորդակցութեան բացակայութեան պատճառով։

Կ. Պոլիս.—«Թանինը» հեգնաբար նկատում է, որ Ադա-Կալէ կղզին Աւստրո-Ունգարիային միացնելը կարող է ծառայել լաւ նիւթ վէճերի համար, և ասում է, որ Լօնդոնում գտնվող օսմանեան լիազօրները ուշադրութիւն կը դարձնեն այդ հարցի վրա և կը պահանջեն վարձատրութիւն։

—

Վէննա.—«Բէյլաս-Պոստին» հաղորդում են Սկիւտարից. «Միջազգային գործողութեան բնաւորութիւնը Հիւսիսային Ալբանիայում, մանաւանդ Սկիւտարում ներհակ է Աւստրո-Ունգարիայի շահերին։ Առանձնապէս ֆրանսիացիքն են, որ ձգտում են վնասել Աւստրիայի պրէստիժը՝ իբրև ազգանվեր կաթոլիկներին հովանաւորողի։ Ֆրանսիացիների վարմունքին համակիր է փոխ-ծովակալ Բէրնէյը։ Իտալացիք սառը կօրրէկտութիւն են ցոյց տալիս»։

—

Սոֆիա.—Բոլգարական Հեռ. Գրասենեակը կտրականապէս հերքում է այն լուրերը, թէ իբր բոլգարական կառավարութիւնը բանակցութիւններ է վարում Սերբիայի հետ կապված դաշնակցական պայմանագիրը փոփոխելու մասին և թէ իբր նա հակված է զիջել նրան վիճելի երկիրները։

—

Սկոպլէ.—Սերբերը ազատում և հայրենիք են ուղարկում դաշնակիցներից գրաւված շրջաններից դեպի Թիւրքերին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)

5 և 6 մայիսի

Պետերբուրգ.—Պետական էլեմուտը գործադրող մասնաժողովը ընդունեց կառավարութեան կարգադրութիւնը՝ միջոցներ յատկացնելու Սարիղամիշից Թիւրքաց սահմանը երկաթուղի կառուցանելու նախնական աշխատանքների համար։

—

Պարիզ.—Պիշոնի ճառը գեղեցիկ տպաւորութիւն գործեց ֆրանսիական քաղաքական շրջանների վրա։ Մամուլը իր կողմից միաբերան հաւանում է ճառը։

Զինուորական ծառայողների մէջ դարձեալ 1 տարի մնացող պահեստի զնդերի պահպանութեան համար խընդրվում է մօտաւորապէս 400 միլիոն ֆրանկ։

—

Պարիզ.—Արմատական սոցիալիստների խնդրոյքում Կայօն ճառեց երեքամեայ զինուորական ծառայութեան օրինագծի դէմ։ «Ժուրնալ-դէ-Դեբատն» ասում է, թէ այդ ճառից երևում է, որ Կոմբի կողմնակիցները արշաւանք են կազմակերպում Բարտուի դէմ։

—

Աթէնք.—Մայիսի 3-ին Կօրֆու եկաւ պրեմիէր-մինիստր Ռակվիտը, որին ազգաբնակութիւնը ցնծագին ընդունեց։ Յետոյ եկաւ ծովային մինիստր Զէրչիլը։ Մինիստրները դիտեցին քաղաքը և երեկոյեան մեկնեցին։

—

Աթէնք.—Ռակվիտը և Զերչիլը իրանց կանանց հետ եկան, կը մնան 2—3 օր և չեն տեսակցի պաշտօնական անձանց հետ։

—

Աթէնք.—Ռակվիտը և Զերչիլը մեկնեցին. հաւանօրէն կայցելեն հնագիտական յուշարձաններով հարուստ մի քանի տեղեր։

—

Վիէննա.—«Միլիդերիշէ-Ռունդշաուի» մէջ հրատարակված է հետևեալ հաղորդագրութիւնը. «1—14 զօրաբանակների հրամանատարներին հրաման է տրված արձակել 1908 և 1909 թ.-ի բոլոր պահեստներին։ Իրանց տներն են մեկնելու այդպիսով մօտ 35,000 մարդ։ Բացի դրանից կարգադրված է մասնակի կերպով զինուորական ծառայութիւնից արձակել 1910 և 1911 թ.թ. պահեստներին, ընդամենը մօտ 15,000 հոգու։ Բոսնիայի, Հերցէգովինայի և Դալմացիայի զօրաբանակներից առայժմ պահեստի գնդերը չեն արձակվում։

«Կօր. Բիւրօն» հաղորդում է, որ մամուլում երևցած տեղեկութիւնները ալբանական ստատուտի (կանոն) մասին անհիմն են։ Այդ չէ կարող լրագրական նիւթ լինել, քանի որ թակայ է Լօնդոնի դեսպանաժողովի քննութեան, որի զբաղմունքները չունեն հրապարակային ընոյթ։

—

Մօրնրէալ.—Ստորին պալատը երրորդ ընթերցումից յետոյ ընդունեց նաւակառուցման օրինագիծը, որով Կանադան 35 միլիոն դոլլար է տալիս Անգլիային երեք դրէդնօուտ կառուցանելու համար։

—

Խարիզա.—Եկաւ գերմանական «Գեբէն» զրահանաւը։

—

Բերլին.—Ստացվել են տեղեկութիւններ լանդտագի ընտրութիւնների հետևանքների մասին. 433 շրջանում ընտրվել են 140 պահպանողական, 49 ազատ պահպանողական, 58 նացիոնալ-լիբերալ, 25 ժողովրդական կուսակցութիւնից, 100 կենտրօնից, 10 լեհ, 2 դանիացի, 7 սօց.-դեմօկրատ։ Պէտք է կրկնաքուէարկութիւն կատարվի 42 շրջանում։

—

Կալկաթա.—Այստեղ և Արևելեան Բենգալիայում կատարվել են շատ ձերբակալութիւններ դաւադրութեան գործի պատճառով։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)

5 և 6 մայիսի

Պէկին.—Թէև այստեղ պատերազմական դրութիւն չէ յայտարարված, բայց և այնպէս ոստիկանութիւնը ձեռք է առնում արտակարգ միջոցներ։ Զարմանալի խիստ հսկողութիւն է նշանակված հարաւից եկողների վրա։ Վերջին օրերս կալանաւորվեցին շատ հարաւցի տէրրորիստներ. մի քանիսը գլխատվեցին։

—

Շանխայ.—Փոխառութեան դէմ սկսված ագիտացիան ճնշվեց։ Տրամադրութիւնը հանգիստ է։ Երկրի ներսում ծագած մանակի յուզմունքները զուրկ են լուրջ նշանակութիւնից։

—

Մոնդէն.—Ներքին Մօնգոլիան նուաճելու նշանակված 28-րդ զօրաբանակը Ֆիչլիդզօ գեներալի առաջնորդութեամբ շտապով դիմում է Պուկիօա՝ Տեանցզինի վրայով՝ Զժանսիանի տրամադրութեան ներքոյ մնալու։

—

Տոկիո.—Պրոֆէսորների և քաղաքական գործիչների մասնակցութեամբ կայացած բազմամարդ միտինգում բանաձև ընդունվեց, թէ անհրաժեշտ է ոչնչացնել տալ Ամերիկայում բոլոր այն օրէնքները, որոնք եապօնացիներին դնում են այլ վիճակում, համեմատած մնացած օտարերկրացիների վիճակի հետ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 27 ապրիլի

Թեհրանի ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի բողոքին ու պահանջմանը վերջապէս Թաւրիզ բերվեցին Ղարամանի-խանն ու Բեարիմ-խանը Ղարադաղից, որոնցից առաջինը Ղարադաղում եղած եկեղեցական կալուածներին վնասներ է հասցրել և տարված քահանայի համար 500 թուման առնելով երկու լուսամուտ դէպի փողոցը նայող։ Այդտեղ էր կատարվում նաև խմբական երգեցողութիւնը։ Երբ մօտեցանք այդ պատուհաններին և Գէորգին ցոյց տուի, որ այդտեղ պէտք է մտնենք, ահաւոր Գէորգը տեսնելով այդտեղ շատերի թաւմ և աղջիկներ՝ ամաչում էր. սակայն շատ համոզելուց յետոյ ներս եկաւ և պատի տակ կանգնեց, մինչև փորձի վերջը։

Հետևեալ երեկոյեան ինձանից առաջ գալով Գէորգը իմ բացակայութեամբ միայնակ դժուարանում է ներս մտնել։ Միւս օրը կրկին բարձրանում եմ Հալաբարտ և համոզում նրան, որ թողնի այդ յիմար ամօթածութիւնը։ Այնուհետև սկսեց կանոնաւորաբար յաճախել։

«Արշակ Բ.» պիէսայի ներկայացումից յետոյ բեմ հանվեց մի պիէս, որի վերջին կցել էինք «Մախմուր սալօի թէ քաթիբա» վոդէվիլը, որտեղ գործող անձերից ծառայ Սարուխանի դերը տուին ինձ խաղալու։ Խաղի ժամանակ այդ Սարուխան ծառան պիտի ձայն տար՝ «Սարուխանի բակլա, Սարուխանի բակլա». այդ տեսակ բացագանչութիւնը ինձ դուր չէր գալիս. վախենում էի, որ չը լինի թէ այդ ներկայացնելուց յետոյ Թիֆլիսի փողոցներում հանկարծ ես ձայն տային՝ «Սարուխանի բակլա», ինչպէս այդ ժամանակներում հէնց Խարփուտի թաղի փողոցներում մի թափառող յիմարի հանկարծ ձայն էին տալիս՝ փողոցի երեխաները՝ «սալախանա-բալախանա, սալախանա-բալախանա»։ Այդ պատճառով հրաժարվեցի այդ դերից։

Ինչպէս եղաւ, հէնց այդ ժամանակ Գէորգ Տէր-Դաւթեանը ներս եկաւ ինձ հետ տեսնելու։ Գ. Զմշկեանին ասացի.

— Գուցէ այս տիրացուն վերցնի այդ դերը. սա խարփուտեցի չէ, հալաբարցի է։

— Շատ լաւ, բայց կարող է։ Ապա փորձենք,— ասաց Ամերիկեանը։

Այդ երեկոյ դերը արտագրած յանձնեցինք Գէորգին. հետևեալ երեկոյեան հէնց առաջի փորձին՝ մի այնպէս լաւ սերտել էր ու այնպիսի տոնով ձայն տուեց «Սարուխանի բակլա, Սարուխանի բակլա», որ ոչ միայն բոլորը հաճոյութիւն տուին, այլ և մեծ ծիծաղ առաջացրեց։

Այդ օրվանից՝ սկսեցին կոմիկական դերերը տալ Գ. Տէր-Դաւթեանին, որը միշտ եռանդով ու բարեխղճօրէն տանում էր։

Սակայն Գ. Տէր-Դաւթեանի հռչակը աւելի տարածվեց այն ժամանակից յետոյ, երբ 80-ական թուականներին՝ աշխարհահռչակ իտալացի Ռոսսին Թիֆլիս եկաւ, և Թիֆլիսի հայոց թաւրօնական խումբը, ի պատիւ Ռոսսիի, տուեց հանդուցեալ Սունդուկեանի «Պէպօ» պիէսան, որի ներկայացման ժամանակ Գիքօյի դերը կատարում էր Գէորգը։ Իսկ Ռոսսին, իտալական հիւպատոսի, Գ. Սունդուկեանի և Արգար Յովհաննիսեանի հետ նստած էր թաւրօնի ձախակողմեան լօժայում։ Այդ դերը ինձ համար ներկայացումը զոյութիւն չունէր, որովհետև «Պէպօն» շատ անգամ էի տեսել, այլ թողած պարտերում աթոռս՝ կանգնել էի մօտ Ռոսսիի լօժային և ամբողջովին հետևում էի, թէ ինչ տպաւորութիւն է անում տեղական կանանցից վերցված պիէսան իր տիպերով Ռոսսիի վրա։ Եւ հետևեալ դէպքը արգէն ցոյց տուեց այդ։ Այն գործողութիւններից յետոյ, երբ Գիքօն—Տէր-Դաւթեանը պիտի բեմը թողներ ու դուրս գնար, կարծես թէ Գիքօն էլ ինձպէս կամենում էր խմանալ Ռոսսիի տրամադրութիւնն ու տպաւորութիւնը իր խաղի մասին, ինքն ևս իր կրծքի սպիտակ շապկով, կարով ու իր պատմական վարսիկով յետ շուռ գալով՝ մի այնպիսի պօզայով կոմիկական դերք ընկաց, որ ոչ միայն բոլոր հանդիսականները ծափահարեցին, այլ նաև ինքը Ռոսսին գլուխը շարժելով հաւանութիւն էր տալիս ու երկար ժամանակ ծափահարում էր։

Այդ օրվանից Տէր-Դաւթեանի աստղը փայլեց և այսօր նա ծնում ու քաղում է իր տաղանդի պտուղը՝ 40-ամեայ պանծալի յօբելեանը։

Ահա թէ ինչպէս Գէորգ Տէր-Դաւթեանը դարձաւ դերասան։

Մակ. Զմշկեան

րի գրուածքները. «Մեղուն» առհասարակ քիչ էր գրում թաւրօնի մասին, թէև նրա խմբագիր Պետրոս Սիմէօնեանը՝ իմ նախկին ուսուցիչը՝ համակրութեամբ էր վերաբերվում իմ գործին և հանդիպելուց խրախուսական խօսքեր էր ասում ինձ։ Ես կարդում էի նաև ինժեներ Իշխան Միքայել Բեհբութեանի քննադատականները, որ նա վառեցում էր իր հրատարակած պիէսների վերջում։

Տէր-Դաւթեանը քաջալերվ և համեստ նայուածքով պատմեց, որ նա իր 18—19 տարեկան հասակում փորձել է գրել մի կատակերգութիւն «Պառաւած նշնվելու աղջիկ» անունով, որը երբեք չէ խաղացվել։ Նրա մէջ դուրս է բերված նոր սերնդի մի թեթեւամիտ ներկայացուցիչ, որ իր հօրը ծաղրում է։

— Իսկ ուրիշ գրուածքներից ինչ ունէք։

— Ունեմ յիշողութիւններ, որ սկսել եմ գրել 1879 թուականից. երբեմն ընդհատել եմ նրանց, յետոյ դարձեալ շարունակել. կազմվել է մի մեծ տետր, որը սակայն կարօտ է լրացման և խմբագրութեան։ Նրանց մէջ կան ինձ համար հետաքրքրական տեղեկութիւններ, որոնց մի մասը կարող է հետաքրքրական լինել և ուրիշների համար։ Մտադիր եմ զբաղվել նրանց մշակութեամբ և տրագրութեամբ։

Ա. Բալանթար

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԸ ԻՆՉՊԷՍ ԴԱՐՁԱՒ ԴԵՐԱՍԱՆ

(Յիշողութիւններ պատանեկական կեանքից)

—

1872 թ-ի սկիզբն էր։

Հայոց թաւրօնական խումբը, Գ. Զմշկեանի և Մ. Ամերիկեանի ղեկավարութեամբ, կանոնաւորաբար շաբաթը մէկ անգամ ներկայացում էր տալիս։

Այդ ժամանակ ես, 16—17 տարեկան մի պատանի, ազգային գաղափարական ցաւով աւելի բռնված քան այժմս, յիշեալ խմբում մասնակցում էի ներկայացումներին ոչ թէ դերակատարութեամբ, այլ պիէսաներ արտագրելով, դերասանների դերերը առանձին դուրս գրելով, աֆիշների տպագրութեան կամ տոմսակներից իրաւունք ստանալու և այլ գործերով։ Եղել են դէպքեր, երբ սաղմնդարների բացակայութեան պատճառով քամանչայովս մինչև անգամ բեմ եմ դուրս եկել, տ. Սաթենիկի երգերին դաշնակցելու։

Այդ բոլոր աշխատութիւնները ու յանձնարարութիւնները ես կատարում էի բոլորովին ձրի ու առանց որևէ ակնկալութեան, որովհետև կուրօրէն սիրում էի հայոց թաւրօնը։ Թաւրօնական խումբը իր ունեցած նիւթական այժերով էր պահպանում թաւրօնի գոյութիւնը և մխիթարն պատմական ազգային պիէսաներն էին «Շուշանիկ», «Վարդան Մամիկոնեան», «Սամուէլ», «Արշակ Բ.», որ աւելի մուտք տալով, դեմիցիա չէր ստացվում, այլ խումբը հալվում էր ծածկում իր ծախքը. այդ պատճառով էլ, ես երբեք չէի տրանջում, եթէ ինձ ոչինչ վարձատրութիւն չէին տալիս։

Մեղանչած չեմ լինի ճշմարտութեան դէմ, եթէ այժմ խոստովանեմ, որ յիշեալ խմբում 5—6 տարի շարունակ մասնակցելուս և կատարածս անթիւ ու անհամար յանձնարարութիւնների ու աշխատանքների համար մի միլիոն մի անգամ եմ ստացել երկու բուբլի 40 կոպէկ, այն էլ իբրև նուէր, բայց ոչ վարձ։ Միւս դերասաններին ևս ես յանդիմանում էի, թէ ինչու են վարձ վերցնում։

Երբ առաջին անգամ, թաւրօնական խումբը պատրաստվում էր, եթէ չեմ սխալվում, Հեքիմեանի հեղինակած երգիրով ճոխացրած «Արշակ .» պիէսան ներկայացնելու, Գ. Զմշկեանն ու Մ. Ամերիկեանը պատուիրեցին ինձ՝ այդ պիէսայի խմբական երգեցողութեան համար օր առաջ երգիչներ գտնել—ի հարկէ ձրի—որպէսզի օր առաջ մեր խմբի անդամ և Գայիանեան օրիորդաց դպրոցի ձայնագրութեան ուսուցիչ հանդուցեալ Խուդանից պատրաստվեն ներկայացման դիշերը կանոնաւոր երգեցողութեան։ Անմիջապէս ամբողջ Թիֆլիսը ոտի տակ տուի, դիմելով այդ ժամանակվայ ընկերներիս ու ծանօթներս. էլ ոչ դեմոգրատ ու բէալիստ մնաց, էլ գործակատարներ խանութներում չը թողի, դպիրներ ու տիրացուներ Թիֆլիսի եկեղեցիներում, որոնց չը դիմէի ու չը համոզէի այդ խմբակցութեանը մասնակցելու։ Եւ այդպիսով հաւաքեցի 25—30 հոգի, որոնց մեծ մասը թէև այժմ արդէն ի վերին աշխարհ են փոխվել, սակայն կան այժմս և կենդանի անձինք, որոնց թւում և Գէորգ Տէր-Դաւթեանը, Խօջիմանքի քահանայ տէր-Բարդուղիմէոսը, որոնք իսկութեամբ կը հաստատեն այս յիշողութիւններիս հարազատութիւնը։

Այդ ժամանակ, երբ ես դիմեցի Գէորգ Տէր-Դաւթեանին, նա տիրացու էր Հալաբարի ս. Մինաս եկեղեցում, որտեղ իր հայրը քահանայ էր եղած։ Գէորգը այժմեանի նման կոկ ու գեր չէր, թոյլ կազմուածքով, սևագէմ դէմքով, կլորիկ փոքրիկ սև ու թափանցիկ աչքերով և այնպիսի քարակ ու սուր քթով, որ, ինչպէս Թիֆլիսցիք սովորութիւն ունէին ասելու, «քիթը բանա՝ մուրը դուս գուքայ». այնքան նուազ էր։ Եւ թէև այդ ժամանակ նա թողել էր Ներսիսեան դպրոցը, սակայն ֆօրմայի սև գլխարկն ու սև սիւրտուքը դեռ ես շարունակում էր հագնել ու գործածել։ Երբ առաջարկեցի գալ երգեցողութեան, Գէորգն ամենքից շուտով համոզվեց և խոստացաւ երեկոյեան ժամից յետոյ գալ Մողնու եկեղեցու բակը։

Երեկոյեան Տէր-Դաւթեանին Մողնու սրահից տարայ, այդտեղից շատ մօտ գտնված, այժմեան Ազգագրական Ընկերութեան բնակարանի փողոցում բնակվող դերասանուհի Քէթօյի դարպասը, որի պատմական մեծ դուռը՝ իր խոր ու մութ անցքով՝ խմբին մասնակցած և դեռ կենդանի մնացածներիս յիշողութիւնից դեռ այժմ էլ չէ անցնում։ Այդտեղ էր խումբը ամեն գիշեր փորձերը կատարում։

Քէթօյի բնակարանը ներքին յարկումն էր և ունէր երկու լուսամուտ դէպի փողոցը նայող։ Այդտեղ էր կատարվում նաև խմբական երգեցողութիւնը։ Երբ մօտեցանք այդ պատուհաններին և Գէորգին ցոյց տուի, որ այդտեղ պէտք է մտնենք, ահաւոր Գէորգը տեսնելով այդտեղ շատերի թաւմ և աղջիկներ՝ ամաչում էր. սակայն շատ համոզելուց յետոյ ներս եկաւ և պատի տակ կանգնեց, մինչև փորձի վերջը։

Հետևեալ երեկոյեան ինձանից առաջ գալով Գէորգը իմ բացակայութեամբ միայնակ դժուարանում է ներս մտնել։ Միւս օրը կրկին բարձրանում եմ Հալաբար և համոզում նրան, որ թողնի այդ յիմար ամօթածութիւնը։ Այնուհետև սկսեց կանոնաւորաբար յաճախել։

«Արշակ Բ.» պիէսայի ներկայացումից յետոյ բեմ հանվեց մի պիէս, որի վերջին կցել էինք «Մախմուր սալօի թէ քաթիբա» վոդէվիլը, որտեղ գործող անձերից ծառայ Սարուխանի դերը տուին ինձ խաղալու։ Խաղի ժամանակ այդ Սարուխան ծառան պիտի ձայն տար՝ «Սարուխանի բակլա, Սարուխանի բակլա». այդ տեսակ բացագանչութիւնը ինձ դուր չէր գալիս. վախենում էի, որ չը լինի թէ այդ ներկայացնելուց յետոյ Թիֆլիսի փողոցներում հանկարծ ես ձայն տային՝ «Սարուխանի բակլա», ինչպէս այդ ժամանակներում հէնց Խարփուտի թաղի փողոցներում մի թափառող յիմարի հանկարծ ձայն էին տալիս՝ փողոցի երեխաները՝ «սալախանա-բալախանա, սալախանա-բալախանա»։ Այդ պատճառով հրաժարվեցի այդ դերից։

Ինչպէս եղաւ, հէնց այդ ժամանակ Գէորգ Տէր-Դաւթեանը ներս եկաւ ինձ հետ տեսնելու։ Գ. Զմշկեանին ասացի.

— Գուցէ այս տիրացուն վերցնի այդ դերը. սա խարփուտեցի չէ, հալաբարցի է։

— Շատ լաւ, բայց կարող է։ Ապա փորձենք,— ասաց Ամերիկեանը։

Այդ երեկոյ դերը արտագրած յանձնեցինք Գէորգին. հետևեալ երեկոյեան հէնց առաջի փորձին՝ մի այնպէս լաւ սերտել էր ու այնպիսի տոնով ձայն տուեց «Սարուխանի բակլա, Սարուխանի բակլա», որ ոչ միայն բոլորը հաճոյութիւն տուին, այլ և մեծ ծիծաղ առաջացրեց։

Այդ օրվանից՝ սկսեցին կոմիկական դերերը տալ Գ. Տէր-Դաւթեանին, որը միշտ եռանդով ու բարեխղճօրէն տանում էր։

Սակայն Գ. Տէր-Դաւթեանի հռչակը աւելի տարածվեց այն ժամանակից յետոյ, երբ 80-ական թուականներին՝ աշխարհահռչակ իտալացի Ռոսսին Թիֆլիս եկաւ, և Թիֆլիսի հայոց թաւրօնական խումբը, ի պատիւ Ռոսսիի, տուեց հանդուցեալ Սունդուկեանի «Պէպօ» պիէսան, որի ներկայացման ժամանակ Գիքօյի դերը կատարում էր Գէորգը։ Իսկ Ռոսսին, իտալական հիւպատոսի, Գ. Սունդուկեանի և Արգար Յովհաննիսեանի հետ նստած էր թաւրօնի ձախակողմեան լօժայում։ Այդ դերը ինձ համար ներկայացումը զոյութիւն չունէր, որովհետև «Պէպօն» շատ անգամ էի տեսել, այլ թողած պարտերում աթոռս՝ կանգնել էի մօտ Ռոսսիի լօժային և ամբողջովին հետևում էի, թէ ինչ տպաւորութիւն է անում տեղական կանանցից վերցված պիէսան իր տիպերով Ռոսսիի վրա։ Եւ հետևեալ դէպքը արգէն ցոյց տուեց այդ։ Այն գործողութիւններից յետոյ, երբ Գիքօն—Տէր-Դաւթեանը պիտի բեմը թողներ ու դուրս գնար, կարծես թէ Գիքօն էլ ինձպէս կամենում էր խմանալ Ռոսսիի տրամադրութիւնն ու տպաւորութիւնը իր խաղի մասին, ինքն ևս իր կրծքի սպիտակ շապկով, կարով ու իր պատմական վարսիկով յետ շուռ գալով՝ մի այնպիսի պօզայով կոմիկական դերք ընկաց, որ ոչ միայն բոլոր հանդիսականները ծափահարեցին, այլ նաև ինքը Ռոսսին գլուխը շարժելով հաւանութիւն էր տալիս ու երկար ժամանակ ծափահարում էր։

Այդ օրվանից Տէր-Դաւթեանի աստղը փայլեց և այսօր նա ծնում ու քաղում է իր տաղանդի պտուղը՝ 40-ամեայ պանծալի յօբելեանը։

Ահա թէ ինչպէս Գէորգ Տէր-Դաւթեանը դարձաւ դերասան։

Մակ. Զմշկեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՎԱՑ ՄԵԾԱՐՎՈՂԸ

Այսօր դերասան Գ. Տէր-Դաւթեանի բեմական գործունէութեան 40-ամեակին նուիրուած հանդէսը ես չեմ անուանում յօբելեանական. գործիչների յօբելեանները լաւագոյն մտքով ոտնվում են և պէտք է ոտնվեն մի անգամ միայն։ Ասենք, առանց այն էլ հայ կեանքը հարուստ է զանազան ամեակների յօբելեաններով...

Այսօր ես կանուանեմ մեծարանքի օր, որովհետև Տէր-Դաւթեանի՝ բնածին դերասանական տաղանդով օժտված այս մարդու՝ յօբելեանը հայ հասարակութեան ջերմ ցանկութեան համաձայն շքեղ կերպով կատարվեց արանից 15 տարի առաջ։

Այն ժամանակ իսկ Տէր-Դաւթեան սիրելի ու մեծարելի էր բոլորի համար։ Ու բաւական է յիշել սոսկ նրա անունը, որ այսօր էլ, մինչև այժմս ու դեռ շատ տարիներ—որ մենք անկեղծօրէն մաղթում ենք դերասան Գէորգ Տէր-Դաւթեանին — լսողի համար պարզ լինի հայ թատրոնի համեստ, փայլուն հարազատ տաղանդի տէր դերասանի դէմքը։

Սակայն հայը սկզբից ի վեր յայտնի է իր ապերախտութեամբ։ Աւելի ճիշտ՝ հայկական վարչութիւնները, որոնցից ի հարկէ ներկայ դէպքում և Դրամ. Ընկերութեան վարչութիւնը։

Պատճառաբանելով, որ պէտք է առաջ քաշել նոր բեմական ոյժերի, Դրամ. Ընկ. վարչութիւնը անգործունէութեան դատապարտեց Տէր-Դաւթեանի նման բիւրեղ տաղանդին, որ մնաց իր սիրած գործից դուրս շնորհիւ անհիմն պատճառաբանութիւնների։

Ինչպիսի՞ Տէր-Դաւթեանը մնում է հայ ժողովրդից սիրված ու յարգված մարդը, որը մեծարվում է այսօր Մելպօմէնի տաճարում «պաշտօնական հանդէսով կամ յօբելեանով»։

Զենք ուզում հաւատալ, որ Դրամ. Ընկ. վարչութիւնը ուզում է սպանել «Պէպօ» և նման կլասիկ երկերը, խորթ մայր դառնալով իսկական տաղանդաւոր կլասիկ դերասաններ Տէր-Դաւթեաններին, Միրզաեանցներին, Վարդուհիներին և այլն։

Հայ թատրոնի այդ վաստակաւոր սպասաւորների փոխարէն հայ թատրոնի բարգաւաճման նախանձախնդիրները միաբերան կաղաղակեն՝

— Կեցցէ՛ Տէր-Դաւթեանը,

— Կեցցէ՛ շնորհալի կոմիկը...

Ե.

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

(Կենսագրական գծեր)

Բնածին տաղանդ դերասան Գէորգ Տէր-Դաւթեանը, բուն Թիֆլիսեցի, ծնվել է 1850 թ. օգոստոսի 25-ին։ Հայրը՝ Հաւլաբարի ս. Մինաս եկեղեցու տէր-Զաքար քահանան՝ որդուն տալիս է Ներսիսեան դպրոցը ուր և նա առնում է ուսումը։

Քսան տարեկան հասակից նեռվում է Մելպօմէնի տաճարը և առաջին անգամ բարձրանում է բեմ 1870 թ. Թիֆլիսի Թամաշվիլի թատրոնում «Հազար թումանոց կարա» կատակերգութեան մէջ Սարուխանի դերում։ Այնուհետև Տէր-Դաւթեանը մինչև օրս էլ հայ բեմի զարդն ու պանն է։

Հայ թատրոնի ոսկեդրջանին՝ Ադամեանի, Մնակեանի նման պայծառ աստղը ոչ թէ աղօտացաւ, այլ, ընդհակառակ, նա աւելի ևս հրաշագեղ ճաճանչներ տուեց և աներկբայ, իր ամպլուայի մէջ, նրանց հաւասար փառահեղութիւն էր կազմում։

Տէր-Դաւթեանը Գիքօյի անմահ արտայայտիչն է Սունդուկեանցի այնքան հարազատ գծագրած «Պէպօյում»։

Եւ մինչդեռ հայ ժողովրդի բուռն համակրութիւնը վայելող կոմիկ Տէր-Դաւթեան իր մարդկային գոյութիւնը պահպանելու համար հարկադրված էր կողմնակի աշխատանքի դիմել, աշխարհահռչակ տրագիկ Բօսին, հիացած՝ բնածին քանքարով, զարմանք էր յայտնում, որ հայութեան մէջ չի գտնվում մէկը, որ այդ բացառիկ տաղանդաւոր դերասանին հնարաւորութիւն տար դէթ մի երկու տարով կրթել իր բեմական արուեստը եթէ ոչ Եւրոպայում, գոնէ Մոսկվայում կամ Պետերբուրգում։

Գ. Տէր-Դաւթեանի բեմական գործունէութեան 25-ամեակը կատարվել է Թիֆլիսում 1897 թ. դեկտեմբերի 17-ին Վրաց ազնուականների թատրոնում։

Բնաւորութեամբ հեզ յօբելեար Տէր-Դաւթեանը, չը նայած իր տարիքին, մինչև օրս էլ նոյն կայտառ կոմիկն է։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՐԱՖՖԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Կիրակի, մայիսի 5-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, ուր գտնվում է Րաֆֆիի շիրիմը և մահարձանը, կատարվեց հանդիսաւոր հոգեհանդիսա, նրա մահվան 25-ամեակի առիթով, Հայ Գրողների Ընկ. նախաձեռնութեամբ։

Հոգեհանգստեան մասնակցում էր և առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։ Ներկայ էին հայ ինտելիգենցիայի, մամուլի, կուլտուրական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ և ժողովրդի խուռն բազմութիւն։

Հոգեհանգստեան կարգը կատարվելուց յետոյ ատենաբանութիւններ արին Ց. Թումանեան՝ Հայ Գրողների Ընկ. կողմից, Հ. Առաքելեան՝ «Մշակի» խմբագրութեան կողմից, Ց. Սօլօվեան՝ «Աղբիւր-Տարազ» հանդէսների կողմից, Ն. Աղբալեան՝ «Հօրիզոնի» խմբագրութեան կողմից և Ա. Աթանասեան՝ «Գիւղատնտես» թերթի կողմից։ Ամեն մէնը իր որոշ տեսակէտով դրուատեց Րաֆֆիի գրական գործունէութիւնը։ Ց. Թումանեան, Հ. Առաքելեան և Ն. Աղբալեան գլխաւորապէս շօշափեցին թիւրքահայերի ազատագրութեան հարցը, որի գլխաւոր ոգեշնչներից և ախոյեաններից մէնը եղաւ Րաֆֆին։ Հ. Առաքելեան, յայտնելով որ 25 տարի առաջ դարձեալ Իրան վիճակվեց Վանքի եկեղեցու բակում արտասանել Րաֆֆիի դամբանականը, յիշելով որ նա իր այդ դամբանականի վերջում խօսելով Րաֆֆիի կատարած գերի մասին թիւրքահայերի ազատագրութեան գործում՝ ասել էր, թէ «կը գայ, անշուշտ, մի օր, երբ Րաֆֆին իր գերեզմանի խորքից կը բարձրանայ։ «Արդ, արձակեմ, Տէր, զծառայս քո, զի տեսին աչք իմ զփրկութիւն ամենայն Իսրայէլի», կցեց թէ՝ աւաղ, այսօր, 25 տարի անցնելուց յետոյ, նա դեռ չէ կարող արտասանել այդ խօսքերը, որովհետև այն սուրը գործը, որին նա նուիրեց իր գործունէութիւնը, դեռ չի գործվեց, այն բռնակալութիւնը, որի տապալման համար նա իր տաղանդաւոր գրիչը շարժեց, բռնակալութիւն, որին ենթարկվել էր և ինքը Պարսկաստանում, դեռ չը տապալվեց։ Ի վերջոյ Հ. Առաքելեան յոյս յայտնեց, որ գուցէ հեռու չէ այն օրը, երբ Րաֆֆիի խռովալ հոգին կը հանգստանայ, տեսնելով հայկական ասն փրկութիւնը իրագործված։

Ն. Աղբալեան այն միտքը արծարծեց, որ Րաֆֆին այժմ հայ մտաւորական դասի վրա դարձրել է ազդեցութիւն գործել, բայց նա շարունակում է իր յեղափոխիչ դերը հայ ժողովրդի մտքերի վրա, և թէ հայ ինտելիգենցիան ապիկար հանդիսացաւ իրագործելու Րաֆֆիի գաղափարները։

Ց. Սօլօվեան խօսեց Րաֆֆիի աշխատակցութեան մասին «Աղբիւրի» մէջ, սրա ծագմանից ի վեր, և «Տարազի» մէջ նա. ցոյց տուեց, որ «Աղբիւրի» երեսը զարդարող գեղեցիկ նկարը վերցված է Րաֆֆիի «Զրաբերդի» նկարագրութիւնից։

Առենաբանութիւններից յետոյ Կարմիր Աւետարանի եկեղեցու ծխ. դպրոցի աշակերտները երգեցին «Ահա ծագեց կարմիր արև» Հասոյի երգը արօրի մասին, երգ, որի խօսքերը պատկանում են Րաֆֆիին, իսկ եղանակը՝ Ալ. Քալանթարին։ Այդ երգը տպված է «Կայծերի» մէջ։

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱՁԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, մայիսի 5-ին, տեղի ունեցաւ վրաց նշանաւոր բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի յուշարձանի բացումը Թիֆլիսի ս. Դաւթի վանքի բակում։

Յուշարձանը ներկայացնում է կիսամօնաստոյն պատկեր մի վիմաքար, որի վրա զետեղված է սև մարմարից շինված մի խորհրդաւոր կանացի արձանագիրք, որը արտայայտում է Վրաստանի վիշտը։

Հանդէսը բազմամարդ էր։ Ներկայ էին բազմաթիւ պատգամաւորութիւններ։

Պատարագից յետոյ, որ կատարվեց Անտոնիոս եպիսկոպոսի գլխաւորութեամբ, հոգևորական դասը դուրս եկաւ եկեղեցուց և շարունակեց ժամերգութիւնը յուշարձանի առաջ։

Անտոնիոս եպիսկոպոսը արտասանեց զգացված ճառ այն մեծ կորուստի մասին, որ ունեցաւ Վրաստանը յանձին Իլիա Ճավճավաձէի։

Կարիշաշվիլին երկար ճառով պատմեց յուշարձանի կառուցման մանրամասնութիւնները և հաղորդեց, որ նա շինված է արձանագործ Նիկօլաձէի նախագծով և անմիջական գործակցութեամբ, իսկ յուշարձանի միւս մասերի կառուցմանը հսկել է ինժէներ Մամրաձէն։

Յուշարձանի բացումից յետոյ վրացի նշանաւոր բանաստեղծ Ակակիյ Ծէրէթէլի յուզված ձայնով խօսեց իր հանգուցեալ ընկերոջ լուսաճաճանչ գործունէութեան և թողած յիշատակի մասին։

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից խօսեց ուղղակի անգամ ժուրնալի, յայտնելով իր զգացված ճառի մէջ յարգանք դէպի հռչակաւոր մեծ վրացին։

Ս. Քալանթար արտասանեց «Մշակի» խմբագրութեան կողմից մի ճառ, որի համառօտութիւնը բերում ենք ներքև։

Դ. Կրդիաշվիլի նուիրեց մի քանի համակրական խօսքեր հանգուցեալի յիշատակին։

Այնուհետև մօտեցան պատգամաւորութիւնները և դրին իրանց բերած պսակները յուշարձանի ստորոտում։

Եղանակը պարզ էր և նպաստում էր տօնի կատարման։

Ս. Դաւթի լեռը զարդարված էր գոյնզգոյն զգեստներ հագած շրջայայող խմբերով։

Ահա Ա. Քալանթարի արտասանած ճառի ամփոփումը.

«Սրբազան հայրեր և յարգելի համաքաղաքացիներ։

«Ես եկել եմ «Մշակ» հայ լրագրի խմբագրութեան կողմից արտայայտելու վրաց մեծ բանաստեղծ, կենցաղագիր և վիպասան Իլիա Ճավճավաձէի յիշատակին խորին յարգանքի զգացմունք, մի հեղինակի, որ կազմում է թանգագին խոշոր զարգերից մէկը մեր հարևան վրաց ազգի գրականութեան։ Անանձին քաղաքացիները մեռնում են, բայց չէ մեռնում ազգը, չեն մեռնում և ազգի այն որդիները, որոնք մարմնացնում են իրանց ազգի հանճարը, ազգի հոգեկան կուռվը։ Այդ հանճարը անմահ է։ Նա իրրև բարոյական խառնում ազգի ունակութիւններին և հոգևոր կեանքի ապրում է դարեր՝ անցնելով սերունդից սերունդ, իրրև թանգագին գաղափարական սեփականութիւն։ Այդպէս ապրում են հին Աթէնքի, Հռոմի դաղափարները և աւանդութիւնները, հիացում պատճառելով յետնորդներին։ Թող ճավճավաձէի ստեղծագործութիւնները բեղմնաւորեն վրաց կեանքը և գրականութիւնը և հարստացնեն վրաց ազգի պանթէոնը՝ ճոխացնելու այն բարոյական գանձը, որ կազմում է ազգի ոգին և նրա թանգագին ժառանգութիւնը»։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մայիսի 2-ից սկսած Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական առանձին տասանը, դատային ներկայացուցիչների մասնակցութեամբ, զանփակ քննում էր քաղաքական մի խոշոր գործ։

Մեղադրվողներն էին՝ Թիֆլիսի վարժուհիների ընկ. ուսումնարանի ուսուցչուհիներ Պետերբուրգի ազնուականուհի Ե. Դ. Ստասովա, Մ. Պ. Վօլմինա և Ա. Ս. Հովսեան, ուսանողուհի Վ. Լ. Շվէյցէր, ուսանող Ս. Ս. Սպանդարեան, դերձակ Վ. Ա. Խաչատրեան և գրաշար Ն. Կ. Օհանէսեանց, որոնք մեղաւոր էին համարված քրէական պատժագրքի 102-րդ յօդ. առաջին կէտով՝ սօց.-դեմօկրատական կուսակցութեանը պատկանելուն մէջ։

Մեղադրեալներին պաշտպանում էին՝ Բէրէնդամ և Բարտ, որոնք հրաւիրված էին Պետերբուրգից՝ առաջինը Ե. Ստասովայի ծնողների կողմից, իսկ երկրորդը՝ Շվէյցէրին պաշտպանելու համար, նոյնպէս և տեղական երդ.-հաւատարմատարներից՝ Մ. Գրուզէնբերգ, Բ. Բրօդսկի, Մ. Կլանկ, Քաթանեան և Ա. Պապօվեան։

Պալատը երեքօրեայ քննութիւնից յետոյ, ամսկս 4-ին, երեկոյեան ժամը 10 և կէսին, կայացրեց հետևեալ վճիռը.

Օրիո դներ Ստասովային, Վօլմինային, Հովսեանին, Շվէյցէրին, ուսանող Սպանդարեանին և դերձակ Խաչատրեանին ճանաչել մեղաւոր 102-րդ յօդ. 1-ին կէտով ու այլ յօդուածներով և ենթարկել ցմահ աքսորի՝ զրկելով նրանց բոլոր իրաւունքներից։ Իսկ գրաշար Ն. Օհանէսեանցին պալատը արդար ճանաչեց՝ նրա դէմ յարուցված մեղադրական կէտերը ապացուցված չը լինելու պատճառով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Երէկ, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի ծննդեան օրվայ առիթով Վրաստանի էկզարխ Իոանէսիսի արքեպիսկոպոսը ուղղափառ հոգևորականութեան մասնակցութեամբ մատուցեց պատարագ և ապա կատարեց գոհաբանական մաղթանք՝ արևշատութիւն մաղթելով Նորին Մեծութեանը և ամբողջ Կայսերական Գերդաստանին։ Պատարագին ու մաղթանքին ներկայ էին Կովկասի փոխարքայի երկու օգնականները, գեներալիտէտը, փոխարքայի խորհրդի անդամները, բոլոր զօրամասերի հրամանատարները, զինուորական և քաղաքացիական հասատաութիւնների ու հիմնարկութիւնների ներկայացուցիչներ և այլն։ Մաղթանքի ժամանակ Արսէնալի ամբից պարզվեց 21 թնդանօթ։ Նոյն օրը գոհաբանական մաղթանքներ կատարեց Վանքի աւ. եկեղեցում հայ հոգևոր դասը՝ գլուխ ունենալով Մեսրոպ եպիսկոպոսին։ Բացի դրանից, կատարվեցին մաղթանքներ կաթոլիկների, լիւթերականների աղօթատներում, մահմեդականների մզկիթում և հրէաների սինագոգում։ Քաղաքը ցերեկով զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառված էր։ Այդ օրը կրթական հասատութիւններում զբաղմունքներ չը կային։

— Կովկասի Փոխարքայի առողջական դրութիւնը մայիսի 2-ից փոքր ինչ վատացել էր, որ արտայայտվեց անքնութեամբ, շնչառութիւնը կտրվելով և սրտի թուլութեամբ։ Թէև այդ ամենը վտանգ չեն ներշնչում, սակայն խոշընդոտ են հանդիսանում Նորին Պայծառափայլութեանը զբաղվել հերթական գործերով։ Բաթումի եղանակը տակաւին թոյլ չէ տալիս կոմսին օգտվել ազատ օդից. այս հանգամանքն էլ դանդաղեցնում է առողջութեան վերականգնումը։

— Բաթումում ստացվում են բազմաթիւ հեռագիրներ, որոնցից դանազան հասարակական հասատութիւններ և անձինք հարցնում են փոխարքայի առողջական վիճակի մասին։

— Ստացանք «Աղբիւր» ամսագրի ապրիլի համարը, որ պարունակում է իր մէջ Ց. Յովհաննիսեանի յօբելեանի առիթով նրա պատկերները զանազան հասակում և յօդուածներ ու ոտանաւորներ նուիրված նրան, ինչպէս և Րաֆֆիի պատկերը, նրա մահվան 25-ամեակի առիթով։ Արտատպված է նաև Ց. Յովհաննիսեանի մի ոտանաւորը տպված «Աղբիւրի» մէջ 1883 թ. ապրիլին։

— Վրացի բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի արձանը, որի բացումը կատարվեց մայիսի 5-ին, արժէ 12,143 ռուբլի։

— Պետական Դումայի անդամ Միք. Պապաջանեանը մի քանի գործերի առիթով խորհրդակցելով Բագուի քաղաքային վարչութեան մէջ, մայիսի 4-ին մեկնել է Պետերբուրգ։

— Եղանակները Թիֆլիսում վերջին օրերը փոփոխական են։ Շուկաներում մթերքների գները մնում են բարձր։ Մսագործները իրանց կամայականութիւնները շարունակում են, չը նայած որ ամեն օր նրանց հակաժողովրդական վարմունքի մասին կազմվում են արձանագրութիւններ։

— Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան Վարչութիւնը թոքախտաւոր երեխեկ հիւանդներին ընդունելու համար ընակարան է վարձել Մուխրանեան հրապարակի վրա։ Ընդունելութիւնը կատարում է բժ. Դաւթեանը։

— Թիֆլիսի դատաստանական պալատը Քութայիսի Փոխարքայ Վարկի Ընկերութեան Վարչութեան նախագահ Լօրդկիպանիձէին և անդամ Իշխ. Բաորաձէին դատապարտել էր երեք և կէս տարով բանտարկութեան։ Սենատը անհետևանք է թողել դատապարտվածների վճռաբեկ գանգատագիրը։

— «Заг.»-ում տպված է, որ Սարուրթալոյի բնակիչ Ալէքսանդր Ուզուզովը նուիրում է պլօմեենիկումը Սարուրթալոյում կառուցանելու համար 300 ր. և 400 քառ. սաժէն հող։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

— o —

Արքունական Թատրոն

Բաղդը կարծես չէ ժպտում Ն. Լերեզվի դրամատիկական խմբին։ Ամենօրեայ ներկայացումները տեղի են ունենում թատրոնը ընդամենը մի երրորդ մասով լիքը, երբեմն և պակաս, հասարակութեան ներկայութեամբ։

Պէտք է խոստովանել, որ Լերեզվի խումբը ունի դերակատարների լաւ անսամբլ և հետաքրքրական ու բովանդակալից պիէսների հարուստ ռէպերտուար։ Իւրաքանչիւր պիէսի բեմադրութիւնը, շնորհիւ ռէժիսէօրական մասի հմտութեան և Արքունական թատրոնի բեմական ամեն տեսակ յարմարութիւնների, կրում է գեղարուեստական բովանդակալից բնոյթ։ Ընդհանուր առմամբ, իւրաքանչիւր ներկայացում թէ խաղի անսամբլային կողմից և թէ բեմադրութեան կողմից ներփնների վրա թողնում է բաւարար տպաւորութիւն։

Այդ բոլորից յետոյ, հասարակութեան սառն վերաբերմունքը դէպի Լերեզվի խմբի ներկայացումները—մեզ անբացատրելի է մնում։

Ամսիս 5-ին խումբը խաղաց Ա. Սուվորինի «Царь Дмитрій Самозванецъ» 5 գործ. պատմական դրամա։

Թագաւոր Դմիտրիյի դերում հանդէս եկաւ խմբի առաջնակարգ դերասան Բ. Գլազօլին, որը իր գեղեցիկ ու զգացված խաղով վառակեց բուռն ծափահարութիւններ ներկայ հասարակութեան կողմից։

Նոյն խրախուսանքին արժանացաւ և Ե. Զարուսսկայա՝ Բօրիս Գոդունովի դստեր՝ Կսէնիայի դերը տպաւորիչ կատարելուն համար։

Ի նկատի առնելով նոյնպէս և մնացած դերակատարների խաղը յիշեալ պիէսում, պէտք է ասենք, որ ներկայացումը այդ երեկոյեան թողից նպաստաւոր տպաւորութիւն։

Հարկ ենք համարում այստեղ յիշել, որ հինգշաբթի, մայիսի 9-ին, խումբը կունենայ gala ներկայացում. կը խաղացվի Սօլօգուբի «Заложники жизни» խիստ հետաքրքրական պիէսը։ Х.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱԳԻՐԹԻՒՆՆԵՐ

Пиксафонъ

Уходъ за волосами дегтемъ

Цѣна флакона, хватающаго на нѣсколько мѣсяцевъ, 1 р. 50 коп.

На научномъ основаніи дѣйствительно лучшій способъ для укрѣпленія кожи головы и волосъ.

Пиксафонъ

(Л. 7) (М. 136289/136296) 2—2

Լոյս տեսաւ
ԿԱՐԱՊԵՏ ԿՈՒՄԻԿԵԱՆԻ
„ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ“
(Ա. Աբովեան, Ս. Նազարեան, Ռ. Պատկանեան, Մ. Նալբանդեան, Ս. Շահազիզ)
Գինն է 1 ռուբլի
Դիմել՝ Москва, Лазаревскій Институтъ Кусиканъ, կամ Тифлисъ, Коммерческій Банкъ, Мамиконяну.
(Չ. 2. Ե. Կ.) 330. 5—4

Մատակարար
Ն. Կ. Մ. ՄԵԾ ԻՇԽԱՆ
ՆԻԿՕԼԱՅ ՄԻԽԱՅԼՕՎԻՉԻ
դրան։

ПОСТАВЩ. ДВОРА Е.И.В. ВЕЛ. КН. НИКОЛАЯ МИХАИЛОВИЧА

ԿԱՆԳ ԱՌԷՔ
ՄԻ ԱԿՆԹԱՐԹ!
ԲԱՑ ԵՆ ԹՈՂՆՎԱԾ
Նոր պապիրոսներ

ՊԻԿ-ՊԻԿ 10 հատը 3 կոպ.
20 հատը 6 կոպ.

Այդ պապիրոսները բաց կը թողնվեն ամեն օր սահմանափակ թիւով, միշտ թարմ, յատկապէս ծխախոտ ճանաչողների համար։

Ա/Տ. „Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ՈՐԴԻՔ“ ԾԱԽՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ։
(2,5,7,12) 342. 5—4

Լոյս տեսաւ Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութեամբ
„ՇՈՂԵՐ“
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Բովանդակութիւն
I. Գրական-գեղարուեստական բաժին. 1) Անտառը վրդովված էր, Դ. Դեմիրճեան. 2) Տենչս. բան., Նիկ. Քեալաշեան. 3) Կարօտ, Գ. Նազարեան. 4) Երազ, Գ. Նազ. 5) *** բան., Հ. Մազմանեան. 6) *** բան., Ցակ. Այվազեան. 7) Սէդա, Գ. Մեսեան. 8) Թախիծ. բան., Մենուհի. 9) *** բան., Հրանդ-Համբար. 10) Գայթանէ, Կար. Միքայէլեան. 11) *** բան., Ցակ. Այվազեան. 12) *** բան., Հ. Մազմանեան. 13) *** բան., Հ. Մազմանեան. 14) Լիւսի, Ար. Յովհաննիսեան. 15) *** բան., Գ. Նազարեան. 16) *** բան., Ց. Խանլարեան, 17) *** բան., Լէյլի. 18) Ճանապարհ վրայ, բան., Սիմ. Առաքելեան. 19) *** բան., Նիկ. Քեալաշեան. 20) *** բան., Գ. Մեսեան։
II. Գրական-քննադատական բաժին. 21) Մուրացանը որպէս մտածող և զեղագէտ., Արսէն Տէրտէրեան. 22) Հոգեհիւանդարանական տարրերը Շիրվանզադէ գրուածքներում, Ե. Դարիբեան։
344 երես, գինը՝ Մէկ ռուբ.։ Դիմել Կովկասի հայ գրավաճառներին։
Ժողովածուի մէջ տեղ գտած բոլոր նիւթերը վարձատրվում են։ Խնդրում ենք հեղինակներին ուղարկել խմբագրութեանս իրանց ճիշդ հասցէները։
Չը տպված նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախք՝ նամականիշներով մինչև մայիսի 20-ը։ Հասցէն՝ СПБ., Хрустальная 20, кв. 4. Г. Месяну.
(Ե.Շ.) 325. 5—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный